

PARLIAMENT  
MONITORING

ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

7-րդ գոխաբուխ | 3-րդ ՆԱՏԱՇՐՋԱՆ  
3-րդ ՁԵԿՈՒՅՑ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆԴԱՏ» տեղեկատվական հասարակական կազմակերպություն





## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

7-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 3-ՐԴ ՆԱՏԱՇՐՋԱՆ  
3-ՐԴ ՁԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N 20040: Ձեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

## ՆԱԽԱԲԱՆ

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 7-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և [parliamentmonitoring.am](http://parliamentmonitoring.am) կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Դիտարկման առանցքում եղել է կառավարման խորհրդարանական համակարգում Ազգային ժողովի նոր լիազորությունների, օրենսդրական և վերահսկողական գործառույթների իրացման արդյունավետությունը:

Ամփոփվել են 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի գործունեության ընդհանուր միտումներն ու ցուցանիշները, ներկայացվել են տվյալներ ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին:

Անդրադարձ է կատարվել ԱԺ վերահսկողական գործառույթին, ՍԴ ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ օրենսդիր մարմնի ձեռնարկած քայլերին: Վերլուծվել են խորհրդարանում էթիկայի հանձնաժողովի ձևավորման, խորհրդարանական լսումների կազմակերպման իրավակարգավորման առանձնահատկությունները:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## 7-րդ գումարման Ազգային ժողով

- Աժ գործունեությունը՝ թվերով 6
- Խմբակցությունների նախաձեռնողականություն, ակտիվություն 13
- Աժ օրենսդրական գործունեություն. պրակտիկա և միտումներ 15
- ՍԴ ճգնաժամի հաղթահարման խնդիրը 7-րդ գումարման Աժ 3-րդ նստաշրջանում 22
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում 34
- Աժ քննիչ հանձնաժողովներ. ինստիտուտի կայացումն ու իրավական խնդիրները 41
- Էթիկայի և շահերի բախման խնդիրներ 47
- Խորհրդարանական լսումներ. պրակտիկա և միտումներ 52

# 7-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

## ԱԺ գործունեությունը՝ թվերով

7-րդ գումարման Ազգային ժողովը 3-րդ նստաշրջանի ընթացքում գումարել է 5 հերթական և 3 արտահերթ նիստ: Բոլոր արտահերթերը հրավիրվել են կառավարության նախաձեռնությամբ:

3-րդ նստաշրջանում խորհրդարանն ընդունել է 169 օրենք, որոնցից 7-ը «մայր» օրենքներ են, 22-ը՝ օրենք-համաձայնագրեր, 140-ը փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում:

### Գրաֆիկ 1. Ընդունված օրենքները՝ ըստ նստաշրջանների

#### 2-րդ նստաշրջան




#### 3-րդ նստաշրջան



Ընդունված օրենքներից 53-ի հեղինակը ԱԺ պատգամավորներն են (38-ը պատգամավորներ, 15-ը՝ խմբակցություններ), 116-ը կառավարության նախաձեռնություններն են:

**Գրաֆիկ 2. Օրենքների հեղինակման ԱԺ- կառավարություն հարաբերակցությունը**

**2-րդ նստաշրջան**



**3-րդ նստաշրջան**



Ամբողջությամբ ընդունված օրենքներից 30-ի հեղինակը «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներն են, 15-ը«Լուսավոր Հայաստան»-ի նախաձեռնություններն են (բոլորը ներկայացվել են խմբակցության կողմից),8-ը հեղինակել են ԲՀԿ խմբակցության պատգամավորները:

**Գրաֆիկ 3. Խմբակցությունների նախաձեռնությունները՝ ըստ նստաշրջանների**

**2-րդ նստաշրջան**



**3-րդ նստաշրջան**




Առաջին ընթերցմամբ ընդունվել և հաջորդ ստաշոջանի օրակարգ է տեղափոխվել պատգամավորների ու խմբակցությունների հեղինակած 17 օրինագիծ: Դրանցից 9-ը՝ «Իմ քայլի», 5-ը՝ «Լուսավոր Հայաստանի», 3-ը ԲՀԿ-ի սահմանափակություններն են:

Շրջանառության մեջ է ստաշոջանի օրակարգ չընդգրկված 189 օրենքի սահագիծ, որոնցից 102-ը պատգամավորների ու խմբակցությունների հեղինակած սահագիծներն են: «Իմ քայլի» պատգամավորները շրջանառության մեջ են դրել 59, ԼՀԿ-ի և ԲՀԿ-ի պատգամավորները՝ 18-ական սահագիծ: 7-ը անկախ պատգամավոր Արման Բաբաջանյանի սահագիծներն են, մնացածը՝ կառավարության:

Ընդունված օրենքների գերակշիռ մասը վերաբերել է պետաիրավական, և ֆինանսավարկային ոլորտներին:

#### Գրաֆիկ 4. Ընդունված օրենքները՝ ըստ ոլորտների





Մարդու իրավունքների պաշտպանության և եվրախնտեգրման հարցերի մշտական հանձնաժողովները գլխադասային են եղել նստաշրջանի ընթացքում քննարկված 1-ական հարցի համար:

Քվեարկությամբ մերժվել է 22 օրենսդրական նախաձեռնության ընդգրկումը 7-րդ գումարման ԱԺ 3-րդ նստաշրջանի օրակարգ: Դրանցից 10-ը ԼՅԿ-ին նախաձեռնություններն են, 11-ը՝ ԲՀԿ-ի, 1-ը՝ «Իմ քայլ»-ի:

### Գրաֆիկ 5. Մերժված նախագծերը՝ ըստ նստաշրջանների



Քննարկվել և չի ընդունվել 8 օրենսդրական նախաձեռնություն: Դրանցից 4-ը՝ ԼՅԿ-ի, 3-ը՝ ԲՀԿ-ի, 1-ը՝ «Իմ քայլ» խմբակցության պատգամավորների հեղինակած նախագծերն են:

ԼՅԿ-ն նախագծերից մեկով փոփոխություններ էր առաջարկում «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում, մյուսով՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ գինժառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում: «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող նախագիծը, որով առաջարկվում էր ազատականացնել ԱԱ մարմինների և ոստիկանության ղեկավարի պաշտոնները, առաջին ընթերցմամբ ընդունվել է առանց դեմ քվեարկության, երկրորդ ընթերցմամբ մերժվել 96 դեմ-ով: Քննարկվել և մերժվել է նաև «Լուսավոր Հայաստան» խմբակցության հարցապնդման հիման վրա ներկայացված որոշման նախագիծը՝ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին:

Նստաշրջանի ընթացքում քննարկվել ու քվեարկությամբ մերժվել է ԲՀԿ խմբակցության պատգամավորների հեղինակած 3 օրենսդրական նախաձեռնություն: Հարկային օրենսգրքում ԲՀԿ խմբակցության պատգամավոր Միքայել Մելքումյանի առաջարկած երկու նախագծերը և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում նախատեսվող փոփոխությունները, որով խմբակցության պատգամավորներն առաջարկում էին գործավարների, փորձագետների քանակի ավելացում:

Քննարկվել և մերժվել է խորհրդարանական մեծամասնության պատգամավորի օրենսդրական նախաձեռնությունը, որով առաջարկվում էր փոփոխություն «Անվտանգության խորհրդի կազմավորման եւ գործունեության մասին» օրենքում:

Նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովն ընդունել է 2020թ.պետական բյուջեի նախագիծը, ընտրել է Կենտրոնական բանկի խորհրդի 1 անդամ և նշանակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմի 5 անդամ:

Ձևավորվել է 3 քննիչ հանձնաժողով՝ ցամաքային ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը և 2016-2019թթ. ոլորտը համակարգող և վերահսկող լիազոր մարմինների գործունեությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով, 2018 թվականի սեպտեմբերից Երևան համայնքին տրանսպորտային միջոցների և այլ գույքի փոխանցման, ծառայությունների մատուցման պայմանագրերի, ինչպես նաև ոչ գույքային իրավունքների, շինարարության թույլտվությունների, արտոնությունների տրամադրման իրավաչափությունն ու կոռուպցիոն ռիսկերն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով և մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված և նրանց կողմից ընդունված ֆինանսական և այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը և արժանահավատությունը ուսումնասիրող քննիչ հանձնաժողով:

## Ուշագրավ փաստեր

- 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանում ընդունված օրենքների 30%-ը հեղինակել է խորհրդարանը, 70%-ը՝ կառավարությունը: Սա խորհրդարանի նախաձեռնողականության՝ ԱԺ մոնիտորինգի շուրջ տասնամյա դիտարկումների ընթացքում գրանցած ամենաբարձր ցուցանիշն է: 2-րդ նստաշրջանում օրենսդրական նախաձեռնությունների ԱԺ-կառավարություն տոկոսային հարաբերակցությունը 9/91 էր: Նույն հարաբերակցությունն էր նաև 6-րդ գումարման խորհրդարանում:
- Նվազել է արտահերթ նիստ-նստաշրջանների ընթացքում ընդունված օրենքների քանակը: 2-րդ նստաշրջանում արտահերթերի ընթացքում ընդունվել է օրենքների 44%-ը (63-ը 143-ից) , 3-րդում՝ 12%-ը (21-ը 169-ից):

- Ընդդիմադիր խմբակցությունների 21 օրենսդրական նախաձեռնություն քվեարկությամբ մերժվել է և չի ընդգրկվել նստաշրջանի օրակարգ (նախորդ նստաշրջանում այդ թիվը 16 էր): Ընդդիմության 7 օրենսդրական նախաձեռնություն մերժվել է քննարկվելուց հետո: Գրեթե 4 անգամ ավելացել է ընդդիմադիր խմբակցությունների հեղինակած և ընդունված օրինագծերի թիվը. 23՝ նախորդ նստաշրջանի 6-ի փոխարեն:
- Չի ընդունվել խորհրդարանական մեծամասնության պատգամավորի ներկայացրած 1 օրենսդրական նախաձեռնություն: Ուշագրավ է, որ մերժված նախագծով առաջարկվում էր ԱԺ նախագահին իրավունք վերապահել մասնակցելու ԱԽ նիստերին: ԼՅԿ դեմ է քվեարկել, ԲՅԿ-ն՝ ձեռնպահ, իսկ «Իմ քայլից» քվեարկությանը մասնակցել ու կողմ է քվեարկել ընդամենը 66 պատգամավոր:
- Խորհրդարանական մեծամասնությունը առաջին ընթերցմամբ կողմ, իսկ երկրորդ ընթերցմամբ դեմ է քվեարկել «Լուսավոր Չայաստան» խմբակցության հեղինակած օրենսդրական փաթեթին՝ Ազգային անվտանգության մարմիններում և Ոստիկանությունում ծառայության մասին: Առաջին ընթերցմամբ փաթեթն ընդունվել է առանց դեմ քվեարկության, երկրորդ ընթերցմամբ մերժվել է 96 «դեմ» -ով:
- Կառավարության որևէ նախագիծ նստաշրջանի ընթացքում չի մերժվել, բայց խորհրդարանը ընդունել է նախագծեր, որոնց վերաբերյալ գործադիրը վերապահումներ է ունեցել: Մասնավորապես՝ Վարազդատ Կարապետյանի ներկայացրած «Սեւանա լճի Էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում փոփոխությունների առաջարկը կառավարությունը բավարար հիմնավորված չի համարել, բայց այն ընդունվել է առանց «դեմ»-ի՝ 101 կողմ ձայնով(առաջարկվում էր սահմանափակել Սևանա լճից լրացուցիչ ջրառի հնարավորությունը):
- Որպես գլխադասային ամենաշատը հանդես են եկել պետաիրավական (48) և ֆինանսավարկային ու բյուջետային (39) հարցերի մշտական հանձնաժողովները, ամենաքիչը՝ մարդու իրավունքների պաշտպանության և եվրաինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովները: Վերջինները գլխադասային են եղել նստաշրջանի ընթացքում քննարկված 1-ական հարցի համար:
- 3-րդ նստաշրջանի ընթացքում ԱԺ 11 մշտական հանձնաժողովներից միայն 3-ն են հանդես եկել խորհրդարանական լսումներ հրավիրելու նախաձեռնությամբ: 1-ական լսում հրավիրել են գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի, պաշտպանության և անվտանգության հարցերի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովները:


- Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը ԱԺ աշխատանքային նստաշրջանի ընթացքում անցկացրել է ընդամենը 1 նիստ: Միակ նիստը եղել է արտահերթ, որի ընթացքում որոշել են մինչև տարեվերջ կազմակերպել խորհրդարանական լսումներ՝ նվիրված ԶԶ-ԵՄ ընթացիկ հարաբերություններին: Լսումները, սակայն, չեն կազմակերպվել:
- Խորհրդարանական լսումներ հրավիրելու՝ ԱԺ կանոնակարգ-օրենքով սահմանված իրավունքից ԱԺ 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանում ամենից շատ օգտվել է ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը: ԱԺ 3 խմբակցությունները խորհրդարանական լսումներ չեն հրավիրել: Աշխատանքային նստաշրջանի 4 ամիսների ընթացքում Ազգային ժողովում հրավիրվել են 5, իսկ անցած 2019 թվականի ընթացքում 9 խորհրդարանական լսումներ:
- 7-րդ գումարման Ազգային ժողովի 3 նստաշրջանների ընթացքում քննիչ հանձնաժողովի ստեղծման և գործարկման վերահսկողական ռեսուրսը կիրառվել է լիարժեքորեն. ձևավորվել է 5 քննիչ հանձնաժողով, որոնցից երկուսը՝ 2-րդ, իսկ երեքը՝ 3-րդ նստաշրջանում:
- 7-րդ գումարման Ազգային ժողովում երեք նստաշրջանների ընթացքում որևէ ժամանակավոր հանձնաժողով չի ձևավորվել, այդ թվում՝ պատգամավորների էթիկայի և շահերի բախման հարցերի առնչությամբ:
- 3-րդ նստաշրջանի ընթացքում ամենաշատ «կողմ» քվեարկած պատգամավորը ԲՀԿ-ից Կարինե Պողոսյանն է (189), ամենաշատ «դեմ» քվեարկածը՝ «Իմ քայլ»-ից Յայկ Սարգսյանը (30), ամենաշատը «ձեռնպահ» է քվեարկել «Իմ քայլ»-ից Թագուհի Թովմասյանը (18): Ամենաշատը բացակայել է «Իմ քայլ»-ից Արուսյակ Զուլիալյանը (132), ամենաշատը հարց տվել ու ելույթ է ունեցել ԲՀԿ-ից Միքայել Մելքումյանը (79)<sup>1</sup> :
- «Իմ քայլը» խմբակցության պատգամավորները միասին նստաշրջանի ընթացքում հարց են տվել և ելույթ են ունեցել 578, ԲՀԿ-ականները՝ 236, «Լուսավոր Հայաստանը»՝ 144 անգամ: «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներից յուրաքանչյուրը միջինը հնչեցրել է 7, ԲՀԿ-ի և ԼՀԿ-ի պատգամավորներից յուրաքանչյուրը՝ 8-ական հարց ու ելույթ:
- Նստաշրջանի ընթացքում «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Էդգար Առաքելյանը հրաժարվել է պատգամավորական մանդատից, պատգամավոր Էդարծել Արթուր Մանուկյանը: Արման Բաբաջանյանը դուրս է եկել «Լուսավոր Հայաստան» խմբակցությունից՝ դառնալով խորհրդարանի միակ անկախ պատգամավորը:

<sup>1</sup> Parliamentmonitoring.am-ի վիճակագրությունը մշակվում է ԱԺ պաշտոնական կայք էջի հրապարակային տվյալների հիման վրա: Բոլոր տվյալները պաշտոնական աղբյուրից վերցվում և մշակվում են հատուկ այս նպատակով ստեղծված համակարգչային ծրագրի միջոցով: Պատգամավորների հարցերի, ելույթների վիճակագրությունը կազմվում է միայն օրինագծերի քննարկումների և քվեարկությունների հիման վրա: Պատգամավորների բացակայությունների ցուցանիշն ընդհանուր է՝ առանց հարգելի և անհարգելի բացակայությունների տարբերակման:

## ՆԱԽԱԶԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

**«Իմ քայլը» խմբակցություն.** 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների հեղինակած նախագծերից 30-ն ընդունվել է ամբողջությամբ, 9-ը՝ առաջին ընթերցմամբ, 59 օրենքի նախագիծ շրջանառության մեջ է: Խմբակցության հեղինակած օրինագծերից 1-ը քվեարկությամբ օրակարգ չի ընդգրկվել, 1-ը քննարկվել և քվեարկությամբ մերժվել է լիազումար նիստի ընթացքում:


### Գրաֆիկ 6. «Իմ քայլը» խմբակցության օրենսդրական նախաձեռնությունները



Ըստ [parliamentmonitoring.am](http://parliamentmonitoring.am) կայքի վիճակագրության՝ նստաշրջանի ընթացքում «Իմ քայլը» խմբակցության «Իմ քայլը» խմբակցության ամենաշատ հարց տված (28) և ելույթ ունեցած (26) պատգամավորը Արտակ Մանուկյանն է: Ամենաշատը «կողմ» (184) քվեարկել են Սերգեյ Ատոմյանը և Ալեքսեյ Սանդիկովը, «դեմ»՝ Յայկ Սարգսյանը (30), «ձեռնպահ»՝ Թագուհի Թովմասյանը (18): Թագուհի Թովմասյանը նաև խմբակցության ամենաշատ չքվեարկած պատգամավորն է (36): Ամենաշատը բացակայել է Արուսյակ Զուլհալյանը (132):

**«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն.** 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավորների հեղինակած նախագծերից 8-ն ընդունվել է ամբողջությամբ, 3-ը՝ առաջին ընթերցմամբ, 18 օրենքի նախագիծ շրջանառության մեջ է: Խմբակցության հեղինակած օրինագծերից 11-ը քվեարկությամբ օրակարգ չի ընդգրկվել, 3-ը քննարկվել և մերժվել է լիազումար նիստի ընթացքում:


**Գրաֆիկ 7. «Բարգավաճ Հայաստան» խմբակցության օրենսդրական նախաձեռնությունները**



Ըստ **parliamentmonitoring.am** կայքի վիճակագրության՝ 3-րդ նստաշրջանի ընթացքում ԲՀԿ խմբակցության ամենաշատ ելույթ ունեցած պատգամավորը (45) Միքայել Մելքումյանն է: Ամենաշատ հարց տվել է Սերգեյ Բագրատյանը (39), նա նաև խմբակցության ամենաշատ ձեռնպահ քվեարկած պատգամավորն է (14): Ամենաշատը «կողմ» է քվեարկել Կարինե Պողոսյանը(189), «դեմ»՝ Արայիկ Աղաբաբյանը (24): Ամենաշատ չքվեարկածը Գևորգ Պետրոսյանն է, բացակայածը՝ Շաքե Իսայանը (97):

**«Լուսավոր Հայաստան» խմբակցություն.** 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավորների հեղինակած նախագծերից 15-ն ընդունվել է ամբողջությամբ, 5-ը՝ առաջին ընթերցմամբ, 18 օրենքի նախագիծ շրջանառության մեջ է: Խմբակցության հեղինակած օրինագծերից 10-ը քվեարկությամբ օրակարգ չի ընդգրկվել, 4-ը քննարկվել և մերժվել է լիազումար նիստի ընթացքում:

**Գրաֆիկ 7. «Լուսավոր Հայաստան» խմբակցության օրենսդրական նախաձեռնությունները**



Ըստ **parliamentmonitoring.am** կայքի վիճակագրության՝ 3-րդ նստաշրջանի ընթացքում «Լուսավոր Չայաստան» խմբակցության պատգամավորներից ամենաշատը «Կողմ» (182) քվեարկել է Ռուբիկ Ստեփանյանը, «դեմ» (27)՝ Արմեն Եղիազարյանը, «ձեռնպահ» (177)՝ Սարգիս Ալեքսանյանը: Ամենաշատը(10) չեն քվեարկել Գևորգ Գորգիսյանը և Արկադի Խաչատրյանը:

Ամենաշատ բացակայածը (128) Էդմոն Մարությանն է: Ամենաշատը հարց է տվել Գուրգեն Բաղդասարյանը (12), Ելույթ ունեցել՝ Արկադի Խաչատրյանը(12):

## ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐ

7-րդ գումարման 3-րդ նստաշրջանում արձանագրվել են ԱԺ օրենսդրական գործունեության ուշագրավ որոշ միտումներ:

**ԱԺ օրինաստեղծ արտադրողականությունը:** 3-րդ նստաշրջանում ընդունվել է 169 օրենք, որը 26-ով ավելի է 2-րդ նստաշրջանում ընդունվածներից: Այսինքն, ԱԺ օրինաստեղծ արտադրողականությունը նախորդի համեմատ աճել է 18 տոկոսով:

Նստաշրջանն աչքի է ընկել նաև համեմատաբար քիչ թվով արտահերթ նիստ-նստաշրջանների հրավիրմամբ: Մասնավորապես, եթե 2-րդ նստաշրջանի ընթացքում հրավիրվել է 7 արտահերթ նիստ-նստաշրջան, ապա 3-րդում՝ միայն 3-ը: Սա բնականոն միջավայրում, առանց շտապողականության օրինաստեղծ գործունեությամբ զբաղվելու կարևոր ցուցիչ է՝ անկախ հանձնաժողովներում և լիազոմար նիստերում կառավարող և ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչների միջև սուր հռետորաբանությունից և փոխադարձ քննադատություններից:

**Խորհրդարանի օրինաստեղծ նախաձեռնողականությունն ու ակտիվությունը:** 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանում գրանցվել է ԱԺ-կառավարություն օրինաստեղծ գործունեության աննախադեպ հարաբերակցություն: Եթե 2-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքների միայն 9%-ի հեղինակն է եղել խորհրդարանը, 91%-ինը՝ կառավարությունը, ապա 3-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքների շուրջ 31 %-ը հեղինակել է խորհրդարանը, 69%-ը՝ կառավարությունը: Թվային արտահայտությամբ՝ 2-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է պատգամավորների կամ խմբակցությունների ներկայացրած 12 նախագիծ, մինչդեռ 3-րդ նստաշրջանում՝ 53 կամ գրեթե 4,5 անգամ ավելի:

Կարելի է փաստել, որ Նախորդ գումարումների համեմատ տեղի է ունեցել բեկումնային փոփոխություն՝ խորհրդարանի օրինաստեղծ գործառույթի կիրարկման և կառավարության ավանդական հեգեմոն դերակատարությունը սահմանափակելու առումով, ինչի հետևանքն օրենսդիր և գործադիր միջև խախտված հավասարակշռության որոշակի վերականգնում է: Այս հանգամանքը նպաստել է ոչ միայն պատգամավորների Նախաձեռնողականության, այլ նաև կառավարության նկատմամբ ԱԺ-ի դիմակայության բարձրացմանը: Այսինքն, ձևավորվել է օրենքների մշակման, քննարկման և ընդունման առավել բանավիճային, երկխոսային միջավայր:

### **Ընդդիմության օրինաստեղծ հնարավորությունների իրացումը Նստաշրջանի ընթացքում**

3-րդ Նստաշրջանը բնորոշվել է խորհրդարանական ուժերի միջև քաղաքական պայքարի սրմամբ, ինչը դրսևորվել է ոչ միայն հռետորաբանության կոշտացմամբ, այլ նաև պատգամավորների, խմբակցությունների հեղինակած Նախագծերի նկատմամբ փոխադարձ անհանդուրժողականությամբ, տարբեր խմբակցությունների պատգամավորների համագործակցության ցածր մակարդակով:

Միակ Նախագիծը, որը հեղինակել են 3 խմբակցությունների պատգամավորները միասին, «Կրթության մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» օրենքներում փոփոխություններ առաջարկող օրենսդրական փաթեթն է, որն ընդունվել է՝ չնայած ԿԳՄՍ Նախարարության բացասական եզրակացության:

Չնայած կառավարության բացասական դիրքորոշմանը՝ խորհրդարանական մշտական հանձնաժողովում դրական եզրակացություն է ստացել «Լուսավոր Չայաստան» խմբակցության հեղինակած օրինագիծը «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ առաջարկելու վերաբերյալ: Նախագիծը, սակայն, մեծամասնության քվեարկությամբ մերժվել է:

2-րդ Նստաշրջանի համեմատ 3-րդում 5-ով ավելացել է խորհրդարանի կողմից քվեարկությամբ մերժված և օրակարգ չընդգրկված Նախագծերի թիվը: Մերժված 21 Նախագծերից 10-ը եղել է ԼՀԿ-ի, իսկ 11-ը՝ ԲՀԿ-ի պատգամավորների հեղինակածը, մինչդեռ իշխող խմբակցության ներկայացուցիչների հեղինակած որևէ Նախագիծ այս ցանկում չկա:

Լիազումար նիստերի ընթացքում քննարկված և մերժված Նախագծերի մեծ մասը ևս ընդդիմության Նախագծերն են: Մասնավորապես, 8 օրենսդրական Նախաձեռնություններից 4-ը եղել է ԼՀԿ-ի, 3-ը՝ ԲՀԿ-ի, 1-ը՝ «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների հեղինակածը:



ԼՀԿ-ն շրջանառության մեջ է դրել «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ առաջարկող նախագծերի փաթեթը: Առաջարկվում էր Ազգային անվտանգության ծառայության տնօրենի և Ոստիկանության պետի պաշտոնները, որոնք ծառայողական-մասնագիտական են, համարել քաղաքական պաշտոններ և այդ պաշտոններում նշանակվողների համար սահմանել պատգամավորի թեկնածուին ներկայացվող պահանջներ:

Նպատակներից մեկը այդ մարմինները ԱԺ-ի առջև հաշվետու դարձնելն էր: «Իմ քայլը» խմբակցությունը առաջին ընթերցմամբ փաթեթին կողմ է քվեարկել: Փաթեթն ընդունվել է 113 կողմ և 2 ձեռնպահ ձայնով: Մինչդեռ երկրորդ ընթերցմամբ «Իմ քայլը» խմբակցությունը փոխել է դիրքորոշումը՝ դեմ արտահայտվելով նախագծին, նախնական դիրքորոշումից կտրուկ շրջադարձ է կատարել նաև ԲՀԿ-ն: Արդյունքում 2019թ. դեկտեմբերին երկրորդ ընթերցմամբ օրենսդրական փաթեթը մերժվել է 19 կողմ, 89 դեմ ձայնով:

Քաղաքական մեծամասնության հիմնավորմամբ՝ նշված կառույցների ղեկավարների պաշտոնների «ազատականացումը» հանգեցնում է Սահմանադրության հետ հակասությունների, ինչի պայմաններում հնարավոր չի լինում լուծել ԱԱԾ տնօրենի և Ոստիկանության պետի տեղակալների, նրանց ենթակայության հարցերը, այն առումով, որ նրանք շարունակելու են մտալ ոլորտային ծառայողներ՝ համապատասխան կոչումներով: Բերվել է նաև հիմնավորում, թեև նախատեսվում է խնդիրը դիտարկել սահմանադրական փոփոխությունների համատեքստում, հետևաբար, անհրաժեշտ է մինչ այդ խուսափել նման փոփոխություններից:

Խորհրդարանն առաջին ընթերցմամբ մերժել է նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» և «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքներում փոփոխություններ նախատեսող փաթեթը, որը ներկայացրել էր «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Աննա Կարապետյանը: Առաջարկվում էր ստեղծել իրավական հիմքեր, որպեսզի ԱԺ նախագահն օրենքի ուժով մասնակցություն ունենա Ազգային անվտանգության խորհրդի նիստերին, ունենա օրակարգի ու քննարկվող փաստաթղթերի վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու իրավունք: Օրենսդրական փաթեթի առաջարկմամբ խնդիր էր դրվել պառլամենտական կառավարման համակարգին հարիր՝ բարձրացնել ԱԺ-ի քաղաքական դերն ու կշիռը առանցքային որոշումների կայացման պրոցեսում:

Նախագծի ընդունման համար անհրաժեշտ էր պատգամավորների 3/5-ի կամ առնվազն 80 պատգամավորի կողմ քվեարկությունը, մինչդեռ կողմ քվեարկեց ընդամենը 66 պատգամավոր՝ «Իմ քայլը» խմբակցությունից, ԼՅԿ-ն գրեթե ողջ կազմով դեմ է քվեարկել՝ պատճառաբանելով, որ չեն ընդունվել ԱԱԽ նիստերին նաև ԱԺ խմբակցության ղեկավարների մասնակցությունը նախատեսող իրենց առաջարկությունը: ԲՀԿ-ն քվեարկել է ձեռնպահ:

Մեծ հաշվով, նախագիծը տապալվել է «Իմ քայլը» խմբակցության անփույթ վերաբերմունքի, խմբակցության մեծաթիվ պատգամավորների բացակայության պատճառով: Մյուս կողմից՝ կառավարությունը ևս, ոչ ընդգծված կերպով, դեմ էր նախագծին՝ դիրքորոշմամբ, որ Ազգային անվտանգության խորհուրդը գործադիր իշխանության բաղկացուցիչ է, ինչը ենթադրում է, որ Խորհրդին պետք է անդամակցեն միայն գործադիր իշխանության ներկայացուցիչները: Իրականում, սակայն, նման բնութագրումը խիստ արհեստածին է, որովհետև ԱԱԽ-ն գործադիր իշխանության մաս ճանաչելու կամ դիտարկելու որևէ իրավական հիմք գոյություն չունի: «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի առաջին հոդվածով ամրագրված է, որ Անվտանգության խորհուրդը պետական մարմին է, որը գլխավորում է վարչապետը, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ Անվտանգության խորհուրդը «վարչապետի առաջարկությամբ քննարկում է Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը եւ սահմանների անձեռնմխելիությանը վերաբերող հարցեր»:

Ըստ ՀՀ սահմանադրաիրավական կարգավորումների՝ ինչպես ՀՀ անվտանգության, այնպես էլ տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության հարցերի լուծմանը խորհրդարանն ունի ուղղակի և անմիջական մասնակցություն՝ իր իրավասությունների սահմաններում: Այս իմաստով ի սկզբանե խորհրդի կազմից ԱԺ նախագահի դուրս մղումը, որը տեղի է ունեցել նշված խմբագրությամբ օրենքը նախկին իշխանության կողմից ընդունելու արդյունքում, ոչ միայն արդարացված չէր, այլև չէր բխում բուն Անվտանգության խորհրդի տրամաբանությունից և նրա առջև դրված նպատակներից:

Խորհրդարանի հեղինակած և ամբողջությամբ ընդունված 53 օրենքներից 30-ի հեղինակը «Իմ քայլը» խմբակցության պատգամավորներն են, 15-ինը՝ «Լուսավոր Հայաստան», 8-ինը՝ ԲՀԿ խմբակցության պատգամավորները: Այսինքն, իշխող և ընդդիմադիր խմբակցությունների միջև օրինագծերի հեղինակման տոկոսային հարաբերակցությունը 51/49 է, այն պարագայում, երբ ԱԺ մեծամասնություն-փոքրամասնություն տոկոսային հարաբերակցությունը 67/33 է:

Այսինքն, «Իմ քայլը» խմբակցության որոշիչ մեծամասնության պարագայում ընդդիմությանը հաջողվել է ունենալ գրեթե նույնքան ընդունված նախագիծ, որքան իշխող խմբակցությանը: 2-րդ նստաշրջանի համեմատ «Իմ քայլը» խմբակցությունն իր օրենսդրական նախաձեռնողականության ցուցանիշը բարելավել է 5, իսկ ԼՅԿ-ն և ԲՀԿ-ն՝ 4 անգամ:

### **Հարցապնդումների ինստիտուտը 3-րդ նստաշրջանում**

ԱԺ կանոնակարգով խորհրդարանական փոքրամասնությանը տրվում է կառավարության անդամին գրավոր հարցապնդումով դիմելու, դրա արդյունքներով պայմանավորված՝ կառավարության անդամի հետագա պաշտոնավարման նպատակահարմարության հարցը վարչապետին ներկայացնելու, ընդհուպ վարչապետին անվստահություն հայտնելու հնարավորություն: Խմբակցությունը մեկ հերթական նստաշրջանի ընթացքում կարող է կառավարության անդամներին հարցապնդումով դիմել ոչ ավելի, քան մեկ անգամ, իսկ հարցապնդումն ստանալուց հետո առավելագույնը 30 օրվա ընթացքում վարչապետի հանձնարարությամբ՝ կառավարության համապատասխան անդամը հարցապնդման գրավոր պատասխանն ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

Հարցապնդումը քննարկվում է ԱԺ քառօրյա նիստերի ընթացքում, որի արդյունքում խմբակցությունը կարող է

- կամ առաջարկել ընդունել կառավարության առանձին անդամի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետի քննարկմանն առաջարկելու մասին Ազգային ժողովի որոշում, որը քվեարկության է դրվում առանց քննարկման,
- կամ հայտարարել, որ խմբակցությունը նախատեսում է վարչապետին անվստահություն հայտնելու մասին առաջարկներ կայացնել, որից հետո տվյալ խմբակցությունը կարող է քննարկման ավարտից 24 ժամվա ընթացքում Ազգային ժողովի նախագահին ներկայացնել վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ, որը ևս քննարկվում է կանոնակարգով սահմանված կարգով:

<sup>2</sup> ԱԺ կանոնակարգ, 8-րդ և 121-րդ հոդվածներ

Քաղաքական գործընթացների վրա ներգործելու այս գործիքը 7-րդ գումարման խորհրդարանում կիրառվել է 2 անգամ՝ 2-րդ և 3-րդ նստաշրջաններում: 2 անգամ էլ այդ իրավունքն իրացրել է «Լուսավոր Չայաստան» խմբակցությունը: Մասնավորապես, 2-րդ նստաշրջանում ընդդիմադիր խմբակցությունը բարձրացրել է ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանի, իսկ 3-րդ նստաշրջանում՝ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի պաշտոնանկության հարցը:

Վերջինից դժգոհությունը պայմանավորված էր հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական նորմերի պահպանման նկատմամբ նախարարության կողմից իրականացվող վերահսկողության՝ իրենց գնահատմամբ ցածր մակարդակով: Կառավարությունը ԼՅԿ-ի գրավոր հարցապնդմանը պատասխանել էլ ՅՅ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի մակարդակով՝ ցույց տալով իր կատարյալ աջակցությունը շրջակա միջավայրի նախարարին և նրա կողմից ոլորտում իրականացվող քաղաքականությանը: «Իմ քայլը» խմբակցությունը քվեարկությունից առաջ հայտարարեց, որ դեմ է քվեարկելու, քանի որ նախարարին անվստահություն հայտնելու որևէ հիմք չի տեսնում, իսկ «Բարգավաճ Չայաստան» խմբակցությունը պատճառաբանեց, թե ԱԺ-ում ձևավորված է հանքարդյունաբերության հարցերով զբաղվող քննիչ հանձնաժողով, և մինչ դրա աշխատանքների ավարտը հարցի քննարկումը նպատակահարմար չէ: Նախարարի հետագա պաշտոնավարման հարցը վարչապետին ներկայացնելու մասին ԱԺ որոշման նախագիծը չընդունվեց 17 կողմ և 67 դեմ ձայնով:

7-րդ գումարման խորհրդարանում գրավոր հարցապնդման ինստիտուտի գործարկման արդեն իսկ ձևավորված պրակտիկան վկայում է, որ խմբակցություններն առավելապես խուսափում են այն քաղաքական տակտիկական նկատառումներով կիրառելուց, ինչը, թերևս պայմանավորված է ԱԺ-ում ուժերի հարաբերակցության հստակ և կայուն պահպանման հանգամանքով: Այս իմաստով հարցապնդումների ինստիտուտն առայժմ զուտ ձևականորեն և մասամբ էլ ինքնանպատակ է օգտագործվում, թեև դրա միջոցով հնարավոր է դառնում ոլորտային առանձին խնդիրներ առավել համակողմանի բարձրացնել, խորհրդարանում դրանց շուրջ քննարկումների ծավալում պարտադրել:

### **Խմբակցությունները՝ օրինաստեղծ սուբյեկտ. իրավական հենքը և պրակտիկան 3-րդ նստաշրջանում**

«Ազգայի ժողովի կանոնակարգ» օրենքի 65-րդ հոդվածով օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքով է օժտվել նաև խորհրդարանական խմբակցությունը: ԱԺ կանոնակարգ օրենքով խմբակցություններին նման լիազորություն վերապահելը նպատակ ունի օրինաստեղծ պրոցեսում ընդգծել քաղաքական թիմերի սուբյեկտայնությունը և դրանից ածանցվող՝ հավաքական պատասխանատվությունը:

Խմբակցության կողմից օրինագծի հեղինակումը առավել քաղաքական, քան բուն իրավական ենթատեքստ ունի, որի հիմնական նպատակը խմբակցության հեղինակած օրինագծերի՝ իրենց համար բացառիկ ծրագրային կամ սկզբունքային նշանակությունն ու կարևորությունն ընդգծելն է: Այն ենթադրում է նախագծի մշակմանը թիմի բոլոր անդամների հավասարաչափ մասնակցայնություն և պատասխանատվություն դրա հետագա ընթացքի և ընդունման համար: Օրինագծերը խմբակցությունների անունից հեղինակված լինելու կամ չլինելու հանգամանքից, ինչպես նաև իրողությունից, թե ԱԺ-ի հեղինակած նախագծերի «գամբյուղում» որքան են կազմում խմբակցությունների հեղինակած օրինագծերը, կարելի է նաև պատկերացում կազմել ընդհանուր խմբակցության թիմային, կազմակերպական հատկանիշների, քաղաքական մոբիլության ու գաղափարահենության վերաբերյալ: Այսինքն, վերջինս ինչ-որ իմաստով նշված արժեքներին խմբակցությունների համապատասխանության կարևոր ցուցիչ է:

7-րդ գումարման խորհրդարանի 3-րդ նստաշրջանում ԱԺ երեք խմբակցություններից միայն «Լուսավոր Յայաստան» է շարունակում այս ինստիտուտի «յուրացման» գործընթացը՝ պահպանելով դեռևս նախորդ նստաշրջանից նկատված՝ բոլոր նախագծերը միայն խմբակցության անունից ներկայացնելու պրակտիկան: Մյուս երկու խմբակցությունները գրեթե չեն կիրառում այս մեխանիզմը: Մասնավորապես՝ եթե օրակարգում ընդգրկված նախագծերի ցանկում (անկախ նստաշրջաններից) ԼՅԿ-ն խմբակցության անունից ունի 6, օրակարգում չընդգրկված նախագծերի շարքում՝ 10 և ամբողջությամբ ընդունված նախագծերի մեջ՝ 20 օրինագիծ, ապա«Իմ քայլը» ունի խմբակցության անունից շրջանառության մեջ դրված և ամբողջությամբ ընդունված միայն 2 օրինագիծ, իսկ օրակարգում ընդգրկված կամ դեռևս չընդգրկված նման որևէ նախագիծ չունի: Իսկ ԲՅԿ-ն ունի խմբակցության անունից հեղինակված միայն մեկ նախագիծ, որը դեռևս չի ընդգրկվել նստաշրջանի օրակարգ:

Խմբակցության անունից նախագծերի հեղինակման պրակտիկայով առաջնորդվելն ունի նաև բացասական կողմեր: Խնդիրն այն է, որ այս մոտեցումը պատգամավորին զրկում է անհատական նախաձեռնությունների, առավելևս այլ խմբակցությունների պատգամավորների հետ անհատական մակարդակով գործակցության հնարավորություններից: Նման դրվածքը հակասում է պատգամավորի՝ իր խղճով ու համոզմունքներով առաջնորդվելու, հրամայական մանդատով կաշկանդված չլինելու սահմանադրաիրավական սկզբունքին, որը ենթադրում է առանձին հարցերում բաց կամ փակ անհամաձայնության դրսևորում մեծամասնության արտահայտած դիրքորոշմանը կամ վերջինիս կողմից առաջ քաշված օրինագծերին:

## ՄԴ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 7-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԺ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

2018թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններից և դրա արդյունքներով պայմանավորված՝ նոր կառավարության ձևավորումից հետո առաջացել է մի իրավիճակ, երբ դատական համակարգի նկատմամբ վստահության ճգնաժամն էականորեն խոչընդոտում է իշխանության ճյուղերի միջև բնականոն հաղորդակցմանը, փոխադարձ հավասարակշռման ու հակակշռման մեխանիզմների արդյունավետ իրացմանը: Դատաիրավական համակարգը նոր իրողություններին համապատասխանեցնելու նկատառումներով, հիմք ընդունելով դատական իշխանության սահմանադրական «կառուցվածքի» առանձնահատկությունները՝ քաղաքական իշխանությունը գործարկել է այդ խնդիրը լուծելու երկու մակարդակ:

Առաջինը՝ դատաիրավական համակարգի «վեթինգի» իրականացման գաղափարի առաջադրումն էր, որը նախնական շրջանում ենթադրում էր «անցումային արդարադատության» սկզբունքներով դատավորների շրջանում գտման իրավական կառուցակարգերի ներդրում և գործադրում՝ հիմնականում վերջիններիս ունեցած՝ քաղաքական իշխանության հետ նախկին կապերի, շահերի, ձեռք բերած գույքի և եկամուտների աղբյուրների, իրենց պաշտոնական վարձատրության հետ դրանց համադրելիության ամբողջական հանգամանքների բացահայտման համատեքստում:

Կառավարությունում և արդարադատության նախարարությունում այդ մեխանիզմների մշակման գործընթացում, և հատկապես 2019թ. մայիսի 20-ին ՀՀ վարչապետի կոչով դատարանների վարչական շենքերի շրջափակման ակցիայի իրականացումից 4 օր անց ԲԴԽ նախագահի պաշտոնից Գագիկ Հարությունյանի, դրան հաջորդած՝ ԲԴԽ մի քանի անդամների հրաժարականներից հետո հնարավորություն է ստեղծվել օրենսդրությամբ սահմանված կարգով էականորեն վերափոխել ԲԴԽ կազմը: Դա տեղի է ունեցել քվոտավորված կերպով ՀՀ ԱԺ-ի և Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ԲԴԽ անդամների՝ հրաժարականների պատճառով առաջացած թափուր տեղերի լրացմամբ, որից հետո ԲԴԽ-ն «թարմացված» կազմով ընտրեց Խորհրդի նոր նախագահ:

Ավելի ուշ բովանդակային փոփոխության է ենթարկվել նաև «վեթինգի» գաղափարը: Իշխանությունը միջազգային փորձագիտական հանրույթի ներգրավվածության և խորհրդատվության պայմաններում հրաժարվել է կոշտ մեթոդներից՝ Կոռուպցիայի դեմ պայքարի 2019-2022թթ. ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների

ծրագրով, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորություններին վերաբերող օրենսդրական փոփոխություններով նախատեսելով դատավորների բարեվարքության ստուգման գործիքակազմի ներդրում:

Երկրորդը Սահմանադրական դատարանի նկատմամբ վստահության ճգնաժամի հաղթահարման խնդիրն էր, որի լուծման համար քաղաքական իշխանությունը, ելնելով օրենսդիր իշխանության լիազորությունների շրջանակից, հաջորդաբար մարտավարական երկու մոտեցում էցուցաբերել:

### **ՄԴ նախագահ Ջրայր Թովմասյանի պաշտոնանկության իրավական հիմքերը**

Սահմանադրական դատարանը և դատավորները Սահմանադրությամբ օժտված են անկախության բարձր երաշխիքներով: Ի տարբերություն պետական բազմաթիվ այլ ինստիտուտների՝ ՄԴ-ն հաշվետու չէ խորհրդարանին: Իշխանության մյուս թևերից միայն օրենսդիրն է վերապահված ՄԴ անդամների ընտրության, առանձնահատուկ դեպքերում՝ ՄԴ դատավորների կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման ձևաչափերով ու մեխանիզմներով «միջամտելու» Սահմանադրական դատարանի գործունեությանը, որը, սակայն, որևէ ձևով չի կարող անդրադառնալ վերջինիս սահմանադրական գործառույթների իրացմանը:

Սահմանադրությամբ<sup>3</sup>, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին օրենքով»<sup>4</sup> սահմանվել է, որ ՄԴ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար՝ բացառությամբ, երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

Կարգապահական խախտում կատարելը «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի համապատասխան հոդվածի<sup>5</sup> համաձայն՝ ՄԴ դատավորի լիազորությունների դադարեցման հիմք է, եթե խախտումն էական է: Հոդվածի 3-րդ մասով էական խախտում է համարվում ՄԴ դատավորի կողմից Սահմանադրական դատարանի նիստերից առանց հարգելի պատճառի մեկ տարվա ընթացքում երեք և ավելի անգամ բացակայելը, երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող ՄԴ դատավորի կողմից կրկին կարգապահական խախտում կատարելը, ինչպես նաև այնպիսի արարքը, որը վարկաբեկում է Սահմանադրական դատարանի հեղինակությունը, կամ որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ «Ազգային ժողովի կանոնակարգ»

<sup>3</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 164, մաս 2

<sup>4</sup> «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, հոդված 9

<sup>5</sup> «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 2, կետ 5

օրենքով<sup>6</sup> նախատեսվում է, որ ՍԴ դատավորի լիազորությունների դադարեցման վերջնական որոշումը կայացնում է Սահմանադրական դատարանը՝ համապատասխան որոշմամբ՝ ՍԴ դատավորի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, ինչպես նաև էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում:

Այդ հարցով, ըստ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի նույն հոդվածի, ՍԴ կարող է դիմել Ազգային ժողովը՝ գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առավելագույնը երեք հինգերորդով ընդունված որոշմամբ:

Հիմնվելով այս իրավակարգավորումների վրա՝ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության կողմից մշակվել և 2019թ. սեպտեմբերին խորհրդարանում շրջանառության մեջ է դրվել առերևույթ էական խախտման հիմքով Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին ՀՀ ԱԺ որոշման նախագիծը, որը 2019թ. հոկտեմբերի 1-ին սահմանված կարգով ընդգրկվել է ԱԺ նստաշրջանի և ԱԺ հերթական նիստերի օրակարգ:

Այսպիսով, ՍԴ-ի շուրջ ստեղծված ճգնաժամը հաղթահարելու ամենառացիոնալ տարբերակ է համարվել ՍԴ նախագահի կողմից էական կարգապահական խախտում թույլ տալու հիմքով պաշտոնանկության գործընթացի հարուցումը, իսկ նախատեսված էական կարգապահական խախտումներից որպես հիմք ընդունվել է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը՝ «ՍԴ դատավորի այնպիսի արարք կատարելը, որը վարկաբեկում է Սահմանադրական դատարանի հեղինակությունը, կամ որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ»:

### **Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու նախաձեռնության հիմնավորումները**

Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին ԱԺ որոշման նախագծին կցված ծավալուն փաստաթղթում հղում է կատարվում ՍԴ վարույթում գտնվող կոնկրետ գործով<sup>7</sup> քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 135-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը որոշելուն վերաբերող դիմումի քննության ընթացքում թույլ տրված ենթադրյալ էական կարգապահական խախտմանը:

<sup>6</sup> «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք, հոդված 109  
<sup>7</sup> Գործը ՍԴ վարույթ է ընդունվել ՍԴ ԱՌ-59 աշխատանքային որոշմամբ



«Իմ քայլը» խմբակցությունը դիմումով ներկայացրել է Էական կարգապահական խախտման 4 դրվագ:

- Յրայր Թովմասյանի՝ մինչև Սահմանադրական դատարանի անդամ դառնալը Յանրապետական կուսակցության անդամ լինելու, այդ կուսակցության աջակցությամբ ՍԴ նախագահի անդամ ընտրվելու, դրանով պայմանավորված՝ ՅՅԿ-ի հետ փոխկապակցվածության շարունակման ողջամիտ կասկածի առկայությունը և ՅՅ երկրորդ նախագահ Ռոբերտ Զոչարյանին վերաբերող քրեական գործով անձնական և քաղաքական շահագրգռություններ ունենալու, դրանցով պայմանավորված՝ ինքնաբացարկի հիմքերի առկայությունն անտեսելու հանգամանքը: Վկայակոչելով նաև այն հանգամանքը, որ ՅՅԿ անդամները դատավարության ընթացքում հանդես են եկել Ռոբերտ Զոչարյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը անձնական երաշխավորությամբ փոխարինելու միջնորդությամբ, «Իմ քայլը» խմբակցությունն այս իրողությունները գնահատել է որպես Ռոբերտ Զոչարյանի գործով Յրայր Թովմասյանի մասնակցությունն անհնարին դարձնող գործոններ, որոնք, սակայն, ոչ միայն ՍԴ նախագահը, այլև ՍԴ մյուս դատավորները քննարկման առարկա չեն դարձրել:
- Վկայակոչվել է Յրայր Թովմասյանի և Ռոբերտ Զոչարյանի փաստաբան Արամ Օրբեյանի միջև առկա քավոր-սանիկական կապը: Այս համատեքստում գործի վարույթից Յրայր Թովմասյանին հեռացնելու հիմքը դիտարկվել է հետևյալ դրվագներով. Թովմասյանը և Օրբեյանը հրապարակային ելույթներում իրենց հարաբերությունները բնորոշել են որպես հարազատական, հարցազրույցներից մեկում Արամ Օրբեյանը «խոստովանել» է, որ Ռ.Զոչարյանին վերաբերող գործի քննության շրջանակներում ՍԴ-ի կողմից Վենետիկի հանձնաժողովին և ՄԻԵԴ-ին ներկայացված դիմումը կազմվել է իրենց կողմից, այն ընթացքում, երբ արդեն իսկ քննարկվել է պաշտպանական թիմի կողմից ՍԴ դատարան դիմելու հարցը, Օրբեյանն առնվազն մեկ անգամ ՍԴ վարչական շենքում հանդիպում է ունեցել Յրայր Թովմասյանի հետ: Այս փաստարկները, ըստ «Իմ քայլ»-ի, կասկածի տակ են դնում Յրայր Թովմասյանի անաչառությունը, ինչը ևս հաշվի չի առնվել այդ գործով նրա՝ վարույթին չմասնակցելու հարցը քննարկման առարկա դարձնելու համար:
- Վկայակոչվում է այն հանգամանքը, որ Յրայր Թովմասյանը 2008 թվականին նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձությունների կապակցությամբ, որոնց շրջանակներում նաև հետագայում մեղադրանք է առաջադրվել երկրորդ նախագահին, արտահայտել է համոզմունքներ, որոնք, իբրև կանխակալ դիրքորոշումներ, չեն կարող թույլ տալ նրա մասնակցությունը նույն իրադարձությունների շրջանակներում ՍԴ վարույթում գտնվող գործի քննությանը: Մասնավորապես, այդ իրադարձություններից շատ չանցած՝ 2008-2009թթ. Յրայր Թովմասյանը կարծիք է հայտնել, որ այդ դեպքերի վերաբերյալ հարուցված քրեական գործերի նախաքննության և դատաքննության ընթացքում տեղի են ունեցել ամոթալի խախտումներ, որոնց պարագայում լավագույն տարբերակը

կլիներ այդ գործերի կարծումը, և որ այդ գործերով դատապարտված անձինք չեն կարող իրենց մեղավորությունն ապացուցված համարել: Մինչդեռ 2010թ.Յրայր Թովմասյանի՝ ՅՅ արդարադատության նախարար նշանակվելուց և ՄԻԵԴ-ում այդ դեպքերի առնչությամբ ներկայացված դիմումների քննարկման շրջանակներում արտահայտած դիրքորոշումներից հետևում է, որ նա միանգամայն իրավաչափ է համարում 2008թ.փետրվար-մարտ ամիսներին անցկացված զանգվածային ակցիաների մասնակիցների նկատմամբ կիրառված ուժը,իսկ այդ ակցիաները բնորոշում է որպես զանգվածային անկարգություններ: Ավելին՝ ՄԻԵԴ-ում քննվող նշված գործերով կառավարության և որպես ՄԻԵԴ-ում ՅՅ շահերը ներկայացնող կողմ արդարադատության նախարարության կողմից այդ ժամանակահատվածում միտակ դիրքորոշում է արտահայտվել այն մասին, որ նախագահ Ռոբերտ Զոչարյանի կողմից արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրի ստորագրումը եղել է խստորեն համապատասխան ՄԻԵ կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված իրավունքների սահմանափակումների շրջանակին: Մինչդեռ հենց այդ հրամանագրի իրավաչափությունն է նաև ընկած Ռոբերտ Զոչարյանին առաջադրված՝ սահմանադրական կարգի տապալման մեղադրանքի հիմքում:

- Նշվում է գործի վարույթին Յրայր Թովմասյանի մասնակցության անհնարինության վերաբերյալ ՍԴ դատավորի ներկայացրած հիմքերը քննարկման առարկա չդարձնելով՝ Սահմանադրական դատարանի մասին օրենքի պահանջների խախտում թույլ տալու խնդիրը: «Իմ քայլը» համարում է, որ խախտվել է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջը, համաձայն որոնց ՍԴ դատավորի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը ՍԴ-ն լուծում է գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշմամբ, որն ընդունվում է ՍԴ դատավորների ընդհանուր թվի ձայների 2/3-ով:

Յրայր Թովմասյանը, ունենալով ինքնաբացարկ հայտնելու բազմաթիվ պատճառներ, չի նախաձեռնել նման քննարկում, խուսափել է դրանից նույնիսկ այն դեպքում, երբ ՍԴ դատավոր Վահե Գրիգորյանն առաջադրել է այդ հարցը: Կայացնելով Վահե Գրիգորյանին ՍԴԱՌ-59 գործով վարույթից հեռացնելու որոշում՝ ՍԴ-ն հիմքեր է ստեղծել ՍԴ երեք դատավորներին այդ գործի վարույթից հեռացնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկման առարկա չդարձնելու համար, մինչդեռ վարույթին մասնակցության անհնարինության հարցի քննարկումը որևէ ընդհանրություն չի կարող ունենալ ՍԴ վարույթ ընդունված գործի և դրա բովանդակության հետ: Բացի այդ, ՍԴ-ն աշխատակարգային որոշմամբ նախատեսել է գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով, սակայն «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հասարակական մեծ հնչեղություն ունեցող հարցը պետք է քննարկվի բանավոր դատաքննության ընթացակարգով:

Այսպիսով, ԱԺ-ի ներկայացրած դիմումում էական կարգապահական խախտում է դիտարկվել նշված գործի համատեքստում ինքնաբացարկի մի քանի հիմքերի առկայությամբ Հրայր Թովմասյանի կողմից ինքնաբացարկի հարց չբարձրացնելու հանգամանքը: Ընդ որում՝ եթե առաջին երեքի պարագայում խնդիրներն առավելաբարբարոյաբանական հարթությունում են, հիմնավորումները՝ առավելապես մեկնաբանական, ապա չորրորդ հիմքը կառուցված է լիովին իրավական հիմնավորումների վրա, սակայն դրանում ոչ այնքան Հրայր Թովմասյանի, որքան ընդհանուր առմամբ ՍԴ դատավորների գործող կազմի կողմից թույլ տրված հնարավոր իրավական սխալն է շեշտված՝ այն կտրվածքով, որ վերջինս ևս շահագրգռություն չի ցուցաբերել այդ գործով դատավորների մասնակցության անհնարինությունը բազմակողմանի քննարկելու հարցում:

### **ԱԺ քաղաքական ուժերի դիրքորոշումները**

ՍԴ-ին ուղղված դիմումի խորհրդարանական բուն քննարկումներին «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը մասնակցել է որոշակի վերապահումներով՝ այն դիրքորոշմամբ, որ ՍԴ նախագահի պաշտոնանկության համար որպես էական կարգապահական խախտում ներկայացված հիմքերը թույլ են ու անբավարար: Հատկանշական է, որ նախորդ գումարման խորհրդարանում ՍԴ անդամի թափուր պաշտոնում Հրայր Թովմասյանի թեկնածությանը ԲՀԿ ներկայիս խմբակցության «իրավանախորդ» «Ծառուկյան դաշինք» խմբակցությունը դեմ էր հանդես եկել՝ պատճառաբանելով Հրայր Թովմասյանի քաղաքականացվածությունը, քաղաքական մեծամասնության անդամ լինելու հանգամանքը:

Հրայր Թովմասյանի լիազորությունների դադարեցման հարցով ՍԴ դիմելու քաղաքական որոշմանը լիակատար աջակցություն է դրսևորել «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը՝ այն դիրքորոշմամբ, որ ՍԴ-ին պետք է հնարավորություն տալ որոշելու ներկայացված փաստարկների հիմնավորվածությունը:

Ուշագրավ է, որ խորհրդարանական քննարկման ընթացքում «Իմ քայլը» խմբակցության պատգամավորները նման դիմումի անհրաժեշտությունը հիմնավորում էին առավելապես քաղաքական մոտիվներով: Հարցի բուն՝ իրավական կողմը քննարկման առարկա է դարձել հպանցիկ՝ սահմանափակվելով հիմնական զեկուցողի ներկայացրած վերլուծությամբ ու նկատառումներով:

Խորհրդարանական քննարկումներին ՍԴ նախագահը չի մասնակցել, չնայած ԱԺ կանոնակարգը տալիս է այդ հնարավորությունը: ՉԼՄ-ներին տված հացազրույցներում Հրայր Թովմասյանը դա պայմանավորել է նրանով, որ սկսված գործընթացը, իր գնահատմամբ, քաղաքական սուբյեկտիվ մոտիվացիաների վրա է հիմնված՝ ընդ որում, այն համարելով ոչ այնքան անձամբ իր, որքան Սահմանադրական դատարանի նկատմամբ ճնշման գործիք: Այսպիսով՝ ՍԴ նախագահը, պարտավոր լինելով ՍԴ

դատավորի էթիկական նորմերով սահմանված կարգով հրապարակային դիրքորոշումներ հայտնելիս ցուցաբերել զսպվածություն, քաղաքական գնահատական է տվել ոչ միայն իր վերաբերյալ ներկայացված անվստահությանը, այլև իշխանության կողմից Սահմանադրական դատարանի նկատմամբ վերաբերմունքին: Ավելին՝ դա արվել է իր վարույթում գտնվող կոնկրետ գործի շրջանակներում, եթե նկատի ունենանք, որ լիազորությունների դադարեցման համար հիմք հանդիսացող էական կարգապահական խախտումը հենց այդ գործի շրջանակներում նրա ցուցաբերած վարքագծին է առնչվում: Անվստահության հարցի քննարկման շրջանում նմանատիպ պնդումներով ՍԴ գործող նախագահը լրացուցիչ փաստարկներ ապահովեց ԱԺ քաղաքական մեծամասնության համար:

«Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Յրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով ՍԴ դիմելու մասին» ԱԺ որոշումն ընդունվել է հոկտեմբերի 4-ին՝ ձայների 98 կողմ, 1 դեմ հարաբերակցությամբ: «Բարգավաճ Հայաստանը» չի մասնակցել քվեարկությանը:

### **Սահմանադրական դատարանի «դեմարշը»**

Դիմումը ՍԴ է ուղարկվել հոկտեմբերի 7-ին, իսկ հոկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու աշխատակարգային որոշում է կայացրել: Քննարկմանը չի մասնակցել ՍԴ նախագահ Յրայր Թովմասյանը, որը նախօրեին կարճատև արձակուրդ էր վերցրել:

Աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը ներկայացրել է ԱԺ դիմումը մերժելու մի քանի հիմքեր<sup>8</sup>:

ՍԴ-ն համարել է, որ դիմումում առաջադրված հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանին, իսկ Ազգային ժողովն իրավասու չէ տվյալ հարցով դիմել Սահմանադրական դատարան, քանի որ դիմումի ինչպես վերնագրում, այնպես էլ առանձին հատվածներում Յրայր Թովմասյանի վերաբերյալ «ՍԴ դատավոր» եզրույթին զուգահեռ կիրառել է նաև «ՍԴ անդամ» բառակապակցությունը, ինչը չի համապատասխանում Ազգային ժողովի՝ Սահմանադրական դատարան դիմելուն վերաբերող սահմանադրական կարգավորումներին և «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով սահմանված՝ ՍԴ ուղղված դիմումներին ներկայացվող ընդհանուր պահանջներին:

<sup>8</sup> ԱԺ դիմումը մերժելու հիմքերը ներկայացվել են ՍԴԱՌ-114-րդ աշխատակարգային որոշմամբ(դիմումը չի համապատասխանում Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, 168-րդ հոդվածի 10-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածի, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին):

Երկրորդ՝ ԱԺ-ի ներկայացրած կարգապահական խախտումը հղում է կատարում ՍԴ դատավորների վարքագծի կանոններին, որոնցով ՍԴ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի նախաձեռնման և լուծման բացառիկ իրավասությամբ օժտված է Սահմանադրական դատարանը: ՍԴ համապատասխան որոշման դեպքում միայն ԱԺ-ն իրավասու կլիներ վարքագծի կանոնների խախտումը գնահատելու որպես էական կարգապահական խախտում և այդ հիմքով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման հարցով դիմելու Սահմանադրական դատարան: Մինչդեռ Հրայր Թովմասյանի առնչությամբ ՍԴ-ն նման որոշում չունի:

Երրորդ՝ ԱԺ դիմումը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ: «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով ԱԺ-ն Սահմանադրական դատարան կարող է դիմել ՍԴ դատավորի կողմից էական կարգապահական խախտման հիմքերի մասին հայտնի դառնալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանի դատավոր (անդամ) Հրայր Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը «Իմ քայլը» խմբակցությունը ներկայացրել է 2019թ. սեպտեմբերի 18-ին՝ իր կողմից ներկայացված փաստերի ի հայտ գալու վերջնաժամկետ դիտարկելով 2019թ. սեպտեմբերի 6-ը, երբ Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակվել է ՍԴ 2019թ. սեպտեմբերի 4-ի ՍԴՌ-1476 որոշումը՝ չնայած այն հանգամանքին, որ Ազգային ժողովի խմբակցություններին շատ ավելի վաղ են հայտնի եղել այն հանգամանքները, որոնք դիտարկվել են որպես էական կարգապահական խախտումներ: ԱԺ դիմումը վարույթ ընդունելը մերժելու համար ՍԴ-ն իր աշխատակարգային որոշմամբ այդ փաստերի ի հայտ գալու ժամկետ է գնահատել «Ռոբերտ Զոչարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 135-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը քննության ընդունելու մասին ՍԴ 2019թ. հունիսի 21-ի ՍԴԱՌ-59 աշխատակարգային որոշման ամսաթիվը, որը համադրելով սեպտեմբերի 18-ին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու ամսաթվի հետ, հանգել է եզրակացության, որ ՍԴ դիմելու երկշաբաթյա ժամկետը խախտվել է:

ՍԴ-ն գնահատական է տվել նաև ՍԴ երեք դատավորներին Ռոբերտ Զոչարյանի գործով վարույթից հեռացնելու վերաբերյալ ՍԴ դատավոր Վահե Գրիգորյանի միջնորդությանը՝ նշելով, որ այն ներկայացվել է՝ չպահպանելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և Սահմանադրական դատարանի աշխատակարգի պահանջները՝ կապված ժամկետների հետ:

Խնդիրն այն է, որ Սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը Սահմանադրական դատարանը լուծում է գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշման շրջանակներում, տվյալ դեպքում՝ 2019թ. հունիսի 21-ի ՍԴԱՌ-59 աշխատակարգային որոշման ընդունման շրջանակներում, մինչդեռ Վահե Գրիգորյանը միջնորդությունը ներկայացրել է 2019թ. օգոստոսի 28-ին: Ըստ ՍԴ-ի փաստարկների՝ այն քննարկվել է ՍԴ սեպտեմբերի 2-ի աշխատակարգային նիստի ընթացքում: Արձանագրվել է, որ տվյալ փուլում այդ միջնորդությունը ներկայացվել էր կարող: Ուշագրավ է, սակայն, որ չնայած պնդմանը, թե այդ միջնորդությունը քննարկվել է սեպտեմբերի 2-ի աշխատակարգային նիստում՝ ՍԴ-ի աշխատակարգային որոշման մեջ որևէ հիշատակում չկա տվյալ հարցի վերաբերյալ որոշման մասին:

### Ընդհանրացումներ

- ՍԴ նախագահի լիազորությունները դադարեցնելու իրավական գործընթացի նախաձեռնման ժամանակագրությունը փաստում է, որ ԱԺ-ն՝ ՍԴ ճգնաժամի հաղթահարումը պայմանավորելով ՍԴ կազմի փոփոխությամբ, հանդես է բերել որոշակի հապճեպություն: Դիմումում ներկայացված փաստերն ավելի շատ էթիկական և քաղաքական տիրույթում են, քան իրավական: Բացի այդ՝ դիմումը, ըստ էության, չի պատասխանում այն հարցին, թե որքանով կարող է կոնկրետ գործով ՍԴ դատավորի ինքնաբացարկ չհայտնելը կամ ՍԴ-ի կողմից ՍԴ նախագահին վարույթից չհեռացնելը դիտարկվել որպես Սահմանադրական դատարանի հեղինակությունը վարկաբեկող կամ դատավորի պաշտոնի հետ անհամատեղելիությունը հիմնավորող արարք: Այս գործոնները ՍԴ-ին ուղղված դիմումը դարձրել են զգալիորեն խոցելի, ինչի վրա և հիմնականում շեշտադրումներ է արել Սահմանադրական դատարանը՝ դիմումը մերժելու վերաբերյալ իր աշխատակարգային որոշմամբ:
- Գործնականում չէր դիտարկվել հավանականությունը, որ ՍԴ-ն դիմումի մերժման որոշում կընդունի: Խնդրի առանձնահատկությունն այն է, որ կոնկրետ ՍԴ դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ դիմումի քննությունը մերժելու ՍԴ աշխատակարգային որոշումները ենթակա չեն բողոքարկման:
- Աշխատակարգային որոշմամբ ՍԴ-ն փորձել է իրավական նախադրյալներ ստեղծել՝ ԱԺ-ին զրկելու հետագայում նման նախաձեռնություններով հանդես գալու հնարավորությունից: Միաժամանակ ակնարկել է, որ այդպիսի գործընթացները խորհրդարանի կողմից ՍԴ-ի և ՍԴ դատավորների սահմանադրական անկախության հիմնարար սկզբունքի դեմ ուղղված ոտնձգություն են: Այդ մասին է վկայում ՍԴԱՌ 112-րդ որոշման 5-րդ կետով արտահայտվող հետևյալ դիրքորոշումը.

«Սահմանադրության 168-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է: Սահմանադրական դատարանի դատավորի անկախության ապահովման նպատակով սահմանադիրը Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը վերապահել է միայն Սահմանադրական դատարանի դատավորներին (Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ): Սահմանադրական նման կարգավորման տրամաբանությունը բխում է սահմանադրական մարմինների համակարգում Սահմանադրական դատարանի կարգավիճակից և դրանով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանի դատավորների անկախության երաշխիքներին ներկայացվող առանձնահատուկ պահանջներից: Սահմանադրությունն առավելագույնս սահմանափակել է Սահմանադրական դատարանի դատավորների նկատմամբ իշխանության մյուս թևերի ազդեցությունը՝ դրանով իսկ բացառելով ճնշումների հնարավորությունը և երաշխավորելով Սահմանադրական դատարանի սահմանադրական առաքելության արդյունավետ իրականացումը»: Մինչդեռ ակնհայտ է, որ ՍԴ դատավորին լիազորություններից զրկումը հենց կարգապահական պատասխանատվության միջոց է, առավել ևս, երբ հիմքն ինքնին «Էական կարգապահական խախտում» եզրույթով է նկարագրվում: Այս կերպ ՍԴ-ն փաստացի աշխատակարգային որոշումն օգտագործել է՝ ՍԴ նախագահի պաշտոնանկության ԱԺ-ի նախաձեռնությանը գնահատական տալու համար:

- Վերոնշյալ նպատակադրման համատեքստում է նաև ՍԴ-ի ցուցաբերած ֆորմալիստական մոտեցումը աշխատակարգային որոշման հիմքերը շարադրելիս: Մասնավորապես, «Սահմանադրական դատարանի անդամ» եզրույթը դիմումում օգտագործելը ճանաչվել է որպես ՍԴ դիմումների ներկայացման ընդհանուր պահանջներին հակասող: ՍԴ-ն նման բառախառնի վրա շեշտադրումներ է կատարել այն դեպքում, երբ Սահմանադրությամբ «ՍԴ դատավոր» կատեգորիայի սահմանման պարագայում անգամ տարբեր իրավական ակտերում շարունակում է ուժի մեջ մնալ «Սահմանադրական դատարանի անդամ» հասկացությունը՝ ընդ որում, հենց ՍԴ գործող մի քանի դատավորների պարագայում, որին, սակայն, ՍԴ-ն երբևէ իրավական գնահատական չի տվել:

ԱԺ-ի դիմումը վարույթ չընդունելու ՍԴ որոշումը, ըստ էության, խորացրել է ԱԺ-ՍԴ հակասությունները՝ հարցը Հրայր Թովմասյանի անձի տիրույթից տեղափոխելով միջինստիտուցիոնալ հակամարտության հարթություն: Կարելի է փաստել, որ ճգնաժամի հաղթահարման՝ քաղաքական իշխանության ընտրած այս ճանապարհը հանգեցրել է փակուղու:

## Սահմանադրական դատարանի դատավորների կամավոր կենսաթոշակի համակարգի գործարկումը

ՄԴ նախագահի պաշտոնանկությանը հասնելու իրավական գործընթացի ձախողումից հետո Ազգային ժողովը նախաձեռնել է ՄԴ գործող կազմի փոփոխության միջոցով ճգնաժամի հաղթահարման երկրորդ՝ «վաղ կենսաթոշակի ուղարկելու» գործընթացը:

3-րդ նստաշրջանի վերջին քառօրյա նիստերի շրջանակում արագացված ընթացակարգով ընդունվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը: Օրենսդրական փոփոխությամբ նախատեսվում է, որ եթե Սահմանադրական դատարանի այն անդամները, որոնք նշանակվել են սահմանադրական փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առաջ, մինչև 2020 թվականի հունվարի 31-ը հրաժարական ներկայացնեն, և այդ հիմքով նրանց լիազորությունները դադարեն, մինչև իրենց համար Սահմանադրությամբ սահմանված պաշտոնավարման տարիքը լրանալը կարող են ստանալ կենսաթոշակ՝ հրաժարականի պահին ստացած պաշտոնային դրույթաչափի ու հավելավճարի չափով: Եթե վաղ կենսաթոշակի անցնելու նպատակով հրաժարական է ներկայացնում ՄԴ ավելի քան 3 դատավոր, ապա ՄԴ դատավորի թափուր տեղի համար ընտրությունն անցկացվում է թեկնածուների առաջադրումներ կատարելու սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, արագացված ռեժիմով՝ ՄԴ-ի գործունեության բնականոնությունն ապահովելու կամ էապես չխաթարելու նպատակով:

Կառավարության և ԱԺ քաղաքական մեծամասնության ակնկալիքն այն էր, որ ՄԴ-ի շուրջ վստահության ճգնաժամի հաղթահարման համատեքստում ՄԴ այն անդամները, որոնք նշանակվել են նախորդ իշխանության ժամանակաշրջանում, կօգտվեն վաղ կենսաթոշակի անցնելու ընդունվող հնարավորությունից, և հնարավոր կլինի էապես թարմացնել ՄԴ կազմը:

Այս քաղաքական ենթատեքստից բացի առկա է նաև դատարանի կազմը սահմանադրական փոփոխություններով նախատեսված ՄԴ նոր մոդելի տրամաբանությանը «համապատասխանեցնելու» նպատակ: ԶԶ սահմանադրության 166-րդ հոդվածի առաջին մասով սահմանվում է, որ Սահմանադրական դատարանի դատավորներին Ազգային ժողովն ընտրում է տասներկու տարի ժամկետով՝ նախորդ սահմանադրաիրավական կարգավորումներով սահմանված՝ ցմահ պաշտոնավարման ժամկետի (մինչև 65 կամ 70 տարին լրանալը) փոխարեն: Այս փոփոխության կատարումը պայմանավորված էր ՄԴ դատավորների փոփոխելիության՝ ռոտացիայի կիրառման սկզբունքի ներդրմամբ:



Մինչդեռ 213-րդ հոդվածով սահմանվում է, որ մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը (մինչև նրանց 65 կամ 70 տարին լրանալը): Այսինքն՝ ստեղծվել էր մի իրավիճակ, երբ նոր Սահմանադրության լիարժեք ուժի մեջ մտնելուց առաջ և հետո նշանակված ՍԴ դատավորները գտնվում էին անհավասար պայմաններում, և նոր նշանակվողների փոփոխելիության պայմաններում նախկինում նշանակվածները շարունակում էին իրենց պաշտոնավարումը: Կարելի է ասել՝ ՍԴ դատավորների՝ վաղ կենսաթոշակի մասին օրենքի ընդունումը միտված էր ապահովելու որոշակի «միջանցք» այս անհավասարությունը վերացնելու և ՍԴ դատավորների փոփոխման՝ Սահմանադրական փոփոխություններով նախատեսված առավել ճկուն համակարգը կիրառելի դարձնելու համար:

Օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորումներում կառավարությունը նշել էր մի քանի, այդ թվում նաև՝ անցումային արդարադատության տարբեր մեխանիզմներ կիրառած երկրներում դատավորների վաղ կենսաթոշակի ինստիտուտի ներդրման օրինակներ: Խորհրդարանական փոքրամասնությունը, սակայն, սկզբունքորեն դեմ է արտահատվել, և օրենքն ընդունվել է բացառապես «Իմ քայլը» խմբակցության քվեներով՝ 82 կողմ, 34 դեմ ձայների հարաբերակցությամբ:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության տեսանկյունից օրինագիծը բավականաչափ հիմնավորված չէր և «լեզվափոխում» էր անաշխատ եկամուտների ստացումը: Բացի այդ, օրինագծի ընդունումը որակվել է որպես քաղաքական ճնշում ՍԴ-ի նկատմամբ՝ ձերբազատվելու ՍԴ անցանկալի անդամներից, ինչը հակասում է ժողովրդավարական արժեքներին:

«Լուսավոր Հայաստան» խմբակցությունը համարել է, որ օրինագիծն ի զորու չէ լուծել ՍԴ-ի հետ առաջացած խնդիրը, հակասում է հեղափոխության նպատակներին և արժեքներին: Բացի այդ, ստեղծվում է մեխանիզմ՝ «վաստակած» հանգստի ուղարկելու ՍԴ այն անդամներին, որոնք հենց քաղաքական մեծամասնության գնահատմամբ թույլ են տվել ապօրինի գործողություններ, ինչպես նաև այս կերպ ինստիտուցիոնալացվում է անաշխատ եկամուտների ստացումը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Վենետիկի հանձնաժողովը դեռևս ՍԴ անդամների վաղ կենսաթոշակի մասին օրինագծի նախնական մշակումների փուլում անդրադառնալով ՀՀ իշխանությունների այդ նախաձեռնությանը, այն դիտարկել էր հենց դատաիրավական ոլորտում իրականացվող բարեփոխումների տրամաբանության ներքո:

Մասնավորապես՝ ողջունելով բարեփոխումների իրականացման համար ցուցաբերվող հետևողականությունը և գործընթացների թափանցիկությունը՝ Վենետիկի հանձնաժողովն արձանագրել էր, որ դրանք մեծապես համապատասխանում են եվրոպական չափանիշներին և նպաստում են կոռուպցիայի դեմ պայքարին՝ լուրջ սպառնալիք չստեղծելով դատական իշխանության անկախության համար: Իսկ ՍԴ դատավորները կենսաթոշակի կառուցակարգի ներդրման առումով Վենետիկի հանձնաժողովը դիրքորոշում էր արտահայտել, որ եթե նրանց պաշտոնաթողությունն իրականացվում է խիստ կամավորության սկզբունքով և չի խոչընդոտում ՍԴ-ի արդյունավետ և բնականոն գործունեությանը, ապա միջազգային չափանիշների տեսակետից առարկելի չէ:

Այս դիրքորոշումը, ըստ էության, ամրագրում է երկու սկզբունքային մոտեցում. նախ՝ միջազգային չափանիշների տեսանկյունից խնդրահարույց կարող է լինել միայն վաղ կենսաթոշակի անցնելու պարտադրանքը, և երկրորդ՝ կամավորության սկզբունքի պահպանման դեպքում նման մեխանիզմի կիրառումը չի կարող դիտարկվել որպես իշխանության օրենսդիր կամ գործադիր թևերի կողմից Սահմանադրական դատարանի նկատմամբ կիրառվող ճնշում:

Հարկ է արձանագրել նաև, որ ընդունվել է սահմանափակ գործողության ժամկետով օրենք, ինչը հազվադեպ պրակտիկա է առհասարակ օրինաստեղծ գործընթացում: Եթե նկատի առնենք, որ օրենքն ուժի մեջ է մտել դեկտեմբերի 27-ին, և դրանով ՍԴ դատավորներին այս համակարգից օգտվելու հնարավորություն է տրվել մինչև 2020թ. հունվարի 31-ը, ապա ստացվում է, որ օրենքը կիրառության ընդամենը մեկ ամիս ժամկետ ունի, որից հետո այն դառնում է անգործունակ: ԱԺ-ն, իհարկե, կարող է նախատեսված ժամկետները երկարացնելու օրենսդրական նոր նախաձեռնություն իրականացնել, սակայն նման սահմանափակ ժամկետների սահմանումը բավարար հիմնավորված չէ:

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

7-րդ գումարման Ազգային ժողովը պետական կառավարման այլ մարմինների ղեկավար կազմերի ընտրության իր գործառույթի իրացման շրջանակում 3-րդ նստաշրջանի ընթացքում ձևավորել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որը փաստացի փոխարինում է նախկին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին:

Յանձնաժողովը պետք է ձևավորվեր դեռևս 2018 թվականին՝ նույն տարվա մարտի 23-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների փաթեթի տրամաբանությամբ: Փոփոխություններն ու լրացումները նոր կառույցն օժտում էին անկախության առավել բարձր երաշխիքներով և սահմանում գործառույթների ավելի լայն շրջանակ, և թեպետ ստեղծվել է հանձնաժողովի անդամի ընտրության մրցութային խորհուրդ, հանձնաժողովը չի ձևավորվել:

2019թ. Ազգային ժողովի նախագահը նախաձեռնել է ինքնավար մարմինների անդամների թեկնածուների առաջադրման ընթացակարգի փոփոխություն առաջարկող օրենսդրական գործընթաց: Այդ համատեքստում, կապված հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրման կառուցակարգերի հետ, փոփոխություն է նախաձեռնվել է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման ընթացակարգերում:

Փաթեթն ընդունվել է 2019թ. սեպտեմբերի 13-ին՝ ձայների 104 կողմ, 1 դեմ հարաբերակցությամբ: Օրենսդրական փոփոխություններով նախատեսվում էր 5 անդամից բաղկացած հանձնաժողովի առաջին կազմի ձևավորում մինչև 2019թ. նոյեմբերի 30-ը՝ հետևյալ համամասնությամբ. հանձնաժողովի երկու անդամ 6 տարի ժամկետով նշանակվում է կառավարության և ԱԺ մեծամասնության առաջարկությամբ, երկուսը՝ 4 տարի ժամկետով՝ ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների առաջարկած թեկնածուներից, և մեկ անդամ ընտրվում է 3 տարի ժամկետով՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջադրմամբ: Յանձնաժողովի առաջին ամբողջական կազմի նշանակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վերջինս իր կազմից ընտրում է Յանձնաժողովի նախագահ:

2019թ. նոյեմբերի 19-ին խորհրդարանը փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին կազմը: Զվեարկության արդյունքներով ամենացածր վստահության քվեն ստացել էր ԱԺ «Բարգավաճ Յայաստան» խմբակցության թեկնածուն՝ Նարեկ Յամբարձումյանը: Ամենաբարձր վստահության քվեն տրվել էր «Իմ քայլը» խմբակցության քվտայով առաջադրված թեկնածու Էդգար Շաթիրյանին, որը եղել էր Բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողովի անդամ: Սակայն նոյեմբերի 26-ին կայացած Յանձնաժողովի նախագահի ընտրություններում վերջինս բավարար ձայներ չի ստացել, և Յանձնաժողովի նախագահ է ընտրվել «Լուսավոր Յայաստան» խմբակցության քվտայով ընտրված Յայկուհի Յարությունյանը: Էդգար Շաթիրյանը հրաժարական է ներկայացրել՝ ընտրության արդյունքները գնահատելով որպես անվստահություն իր նկատմամբ: Յանձնաժողովի՝ «Իմ քայլը» խմբակցության քվտայով անդամի տեղը մնացել է թափուր:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ըստ կառավարության 2019թ.հոկտեմբերի 2-ին ընդունած հակակոռուպցիոն պայքարի ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի, դիտարկվում է որպես կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի երեք հիմնական բաղադրիչներից մեկը՝ իրավապահ համակարգի և ստեղծվելիք քննչական մարմին հանդիսացող Հակակոռուպցիոն կոմիտեի հետ միասին:

Հանձնաժողովի առաջին կազմի ձևավորման, դրա շուրջ խորհրդարանական քննարկումների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ դիտարկումները:

- 2017թ. ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված էր նման ընթացակարգ: Մասնավորապես, դրանով սահմանված էր, որ Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ՝ կազմված Սահմանադրական դատարանի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների, Հանրային խորհրդի և Փաստաբանների պալատի կողմից նշանակված մեկական անդամներից: Վերջինիս կողմից անցկացված եռաստիճան մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվածների ցուցակը ներկայացվում է ԱԺ նախագահին, և նրանք նշանակվում են Հանձնաժողովի անդամի պաշտոններում: Այս իրավակարգավորումների պայմաններում, թեև մրցույթը տեղի է ունենում խորհրդարանի պատասխանատվության ներքո, խորհրդարանը (առավել ևս՝ քաղաքական մեծամասնությունը) դրանում ուղղակի դերակատարում չի ունենում: Այսպիսով, ԱԺ քաղաքական ուժերից Հանձնաժողովի կախվածության, կաշկանդվածության հնարավոր ռիսկերը հասցվել էին նվազագույնի:

Կատարված օրենսդրական փոփոխություններով Հանձնաժողովի ձևավորման ողջ գործընթացը զարգանում է քաղաքական տրամաբանությամբ, քաղաքական մեծամասնության և կառավարության ուղղակի ներգրավմամբ:

Եական տարբերություններ կան նաև Հանձնաժողովի անդամների թեկնածուներին առաջադրվող պահանջներում:

2017թ. ընդունված օրենքով սահմանվում էր, որ հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել պատգամավորին ներկայացվող պահանջներին<sup>9</sup> համապատասխանող յուրաքանչյուր ոք, ով ունի բարձրագույն կրթություն, առնվազն տասը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և ճանաչում:

<sup>9</sup> Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածով պատգամավորին ներկայացվող պահանջներն են՝ քսանհինգ տարին լրացած լինելը, վերջին չորս տարում միայն ՀՀ քաղաքացի լինելը, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, ընտրական իրավունք ունենալը և հայերենին տիրապետելը:

Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածով պատգամավորին ներկայացվող պահանջներն են՝ քսանհինգ տարին լրացած լինելը, վերջին չորս տարում միայն ՀՀ քաղաքացի լինելը, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, ընտրական իրավունք ունենալը և հայերենին տիրապետելը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի 10-րդ հոդվածով Հանձնաժողովի անդամին ներկայացվում են հետևյալ պահանջները. «Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ եւ հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ով ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից)»: Բացի այդ, Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն:

Երկու իրավակարգավորումների համեմատությունից հետևում է, որ հանվել են ոչ միայն հանձնաժողովի անդամի՝ պարտադիր 25 տարին լրացած լինելու, ՀՀ-ում առնվազն վերջին չորս տարվա մշտական բնակության, այլև ճանաչված լինելու պահանջները, (թեև օրենքի նախկին կարգավորումներով հստակեցված չէին ճանաչված լինելու հանգամանքը գնահատելու չափորոշիչները): Բացի այդ, մասնագիտական գործունեության 10 տարվա ստաժի պահանջի փոխարեն սահմանվել է 5 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին անձը պետք է զբաղեցրած լինի քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոն կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում, այդ թվում՝ մասնավոր ոլորտում: Այսպիսով, զգալիորեն լայնացվել է պոտենցիալ հավակնորդների, հետևաբար նաև՝ ընտրություն կատարելու դիապազոնը, ինչի պայմաններում, բնականաբար, ճանաչված լինելու կատեգորիան պետք է կորցնեի իր նշանակությունը: Թերևս դա էր պատճառը, որ Հանձնաժողովի առաջին կազմի անդամների մեծ մասը քիչ հայտնի է հասարակությանը:

Հարկ է նկատել, որ Հանձնաժողովի ձևավորման ընթացակարգը ժամանակավոր բնույթ է կրում. խնդիր է դրված վերադառնալ մրցույթի միջոցով, մասնագիտական չափորոշիչներով ձևավորվող Հանձնաժողովի մոդելին:

Կառավարության 2019թ, հոկտեմբերի 3-ին ընդունած ԶԶ հակակոռուպցիոն ռազմավարության 54-րդ կետով նախատեսվում է փոփոխել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման կարգը՝ «պահպանելով Զանձնաժողովի կազմավորման մրցութային եղանակը»: Ավելին, Զանձնաժողովի անկախության երաշխիքների բարձրացման նկատառումներից ելնելով, առաջարկվում է վերանայել նաև նրանց պաշտոնական լիազորությունների դադարեցման կարգը՝ սահմանելով, որ Զանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել միայն Զանձնաժողովի համաձայնությամբ և միայն օրենքով սահմանված դեպքերում: Այս համատեքստում Զանձնաժողովի առաջին կազմի ձևավորումը պայմանավորվում է գործընթացի իրականացման օբյեկտիվ հրատապությամբ:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի առաջին կետով նախանշված է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովման նպատակով Զանձնաժողովի ձևավորման ընթացակարգերի և գործառույթների շրջանակի ընդլայնման նշյալ վերանայումների վերաբերյալ օրենսդրական փաթեթը Ազգային ժողովը պետք է ընդունի 2021-2022 թվականների ընթացքում:

- Գործառույթների շրջանակի առումով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը զգալիորեն տարբերվում է նախկին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից, որը չունեւ որևէ իրավական լծակ՝ ներագդելու պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրերի ներկայացման պարտավորության կատարման, հայտարարագրերի բովանդակային լիարժեքության ապահովման վրա:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները ներառում են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցելը, գույքի և եկամուտների հայտարարագրման գործընթացի կանոնակարգումն ու հայտարարագրերի ստուգումը, վերլուծումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման կարգավորումների իրականացմանը հետևելը: Զանձնաժողովն օժտված է բավականին լայն իրավասություններով, մասնավորապես՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների, էթիկայի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների քննումն ու լուծումը, առաջարկություններով հանդես գալը՝ ընդհուպ պատասխանատվության հարցի բարձրացումը, հայտարարագրերի ռեեստրի վարումը, հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործերի քննումն ու լուծումը, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծության իրականացումը, կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակումը, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի իրականացումը, կրթական, այդ թվում՝ պաշտոնատար

պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը և այլն: Ամենալուրջ գործառույթներից մեկը, որով օժտված է Հանձնաժողովը, հայտարարագրերի ոչ պատշաճ և ոչ ամբողջական ներկայացված լինելու դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումն է, հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու առերևույթ հատկանիշներ տեսնելու պարագայում գլխավոր դատախազությանը դիմելը:

2019թ.կառավարության ընդունած հակակոռուպցիոն ռազմավարությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ստանձնում է մի քանի նոր, ըստ էության, Հայաստանի Հանրապետության համար նորարարական ինստիտուտի՝ հակակոռուպցիոն մոնիթորինգի, պաշտոնատար անձանց կողմից նվերների ստացման հսկողության և պաշտոնատար անձանց բարեվարքության վերահսկման գործառույթներ: Ըստ էության, ներդրվում է, այսպես կոչված, «վեթինգ»-ի տարբերակ, որի հիմքում ոչ թե կադրային զտման, այլ նոր համալրումները «կոռուպցիոն անխոցելիության» սկզբունքով իրականացնելու՝ սահուն փոփոխությունների կոնցեպցիան է:

Ռազմավարական այս նպատակներից առայժմ միայն մի քանիսն են արտացոլվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքում: Մասնավորապես, դրանում տեղ չի գտել դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքում խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը: Սա ուշագրավ հանգամանք է այն իմաստով, որ օրենսդիրը, շտապելով դատավորների և դատավորների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը օրենքով Հանձնաժողովի գործառութային պահանջ ձևակերպել այս փուլում՝ դուրս է թողել դատախազների և քննիչների բարեվարքության գործոնը՝ ինչ-որ իմաստով դրսևորելով որոշակի խտրական մոտեցում:

Հարկ է արձանագրել, որ Հանձնաժողովի կազմավորման ընթացակարգերը և իրավասության շրջանակները սահմանող օրենսդրության կարգավորման դաշտից դուրս են մնացել նոր ինստիտուտների գործարկման ենթակառուցակարգերը: Թեև նվերների ռեեստրի վարման, նվերների ստացման նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև պաշտոնատար անձանց բարեվարքության վերաբերյալ եզրակացություններ ներկայացնելու նպատակներն ամրագրվել են օրենքով, սակայն չեն նախատեսվել դրանց իրականացման գործիքները, բարեվարքության գնահատման չափորոշիչները, ինչպես նաև՝ տրվող

եզրակացությունների գործնական նշանակությունն ու վերջնական ազդեցությունն այդ պաշտոններում նշանակումներ կատարելիս: Այս իմաստով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջնային խնդիրներից մեկը պետք է դառնան թատենսդրական դաշտի մշակումը, և այս տեսանկյունից Հանձնաժողովի առաջին կազմի դերակատարությունն առանձնակի նշանակություն է ստանում:

- Հանձնաժողովի առաջին կազմի ձևավորման ընթացակարգում քաղաքական իշխանության ազդեցությունը որոշիչ չդարձնելու սկզբունքի կենսագործումը առանցքային նշանակություն ունի կոռուպցիայի դեմ պայքարում՝ հատկապես ինստիտուցիոնալ մեկնարկի պայմաններում հանձնաժողովի գործառնական անկախության քաղաքական երաշխիքների ապահովման իմաստով: Դրա առաջին դրսևորումը եղավ ընդդիմադիր համարվող խորհրդարանական ուժի քվոտայով նշանակված անդամին հանձնաժողովի նախագահ ընտրելը, երկրորդը՝ Երևանի քաղաքապետի նկատմամբ էթիկական-կարգապահական վարույթի հարուցումը:

Սակայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերաբերյալ օրենսդրությունը նաև որոշակի բացեր ունի, որոնք կարող են Հանձնաժողովի կայացմանը խոչընդոտող գործոններ դառնալ: Մասնավորապես, օրենքը սահմանում է, որ Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, մեկը՝ տնտեսագիտական կրթություն: Սակայն չի հստակեցվում, թե որ սուբյեկտների պատասխանատվության տիրույթում է այս պահանջի ապահովումը: Օրենքը նաև չի սահմանում Հանձնաժողովի անդամներին ներկայացվող որոշակի մասնագիտական պահանջ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից, որոնցից 2-ին առաջադրելու իրավունք է վերապահվել խորհրդարանական ընդդիմադիր ուժերին: Գործող խորհրդարանի պարագայում, որտեղ ընդդիմությունը կազմված է երկու խմբակցությունից, այս իրավակարգավորումը որևէ բարդություն չի հարուցում: Սակայն օրենքը չի կարգավորում այնպիսի իրավիճակ, երբ խորհրդարանում երկուսից ավելի ընդդիմադիր խմբակցություններ են: Ենթադրելի է, որ դա թողնված է այդ ուժերի ներքին քաղաքական դիալոգի և կոնսենսուսի կամ փոխզիջման հանգելու կարողությանը:



## ԱԺ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Աժ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորների նվազագույնը  $\frac{1}{4}$ -ի (պաշտպանության ոլորտին առնչվող հարցերով՝  $\frac{1}{3}$ -ի) ստորագրությամբ խորհրդարանում իրավունքի ուժով կարող է ստեղծվել քննիչ հանձնաժողով: Նպատակը Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի նվերաբերող փաստերը, հանգամանքները պարզելը և հարանք Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելն է: Քննիչ հանձնաժողով ձևավորելու հնարավորությունն էականորեն մեծացրել է խորհրդարանի վերահսկողական պոտենցիալը և այդ գործառույթի գործառնական նշանակությունը՝ հաշվի առնելով նաև այն, որ ներդրվել է առանձին օրենքների, որոշումների, հայտարարությունների, ուղերձների նախագծերի, պատգամավորների էթիկային վերաբերող հարցերի կապակցությամբ եզրակացություններ ներկայացնելու ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու՝ Աժ կանոնակարգով սահմանված հնարավորությանը զուգահեռ:

Քննիչ հանձնաժողով ստեղծվում է Աժ պատգամավորների առնվազն  $\frac{1}{4}$ -ի կամ նախաձեռնությանը միացած նվազագույնը 33 պատգամավորի (պաշտպանության ոլորտին առնչվող հարցերի դեպքում՝  $\frac{1}{3}$ -ի կամ 44 պատգամավորի) ստորագրությամբ համապատասխան նախագիծն Աժ նախագահին ներկայացնելով, առանց լրացուցիչ քննարկման և քվեարկությամբ ընդունվելու անհրաժեշտության: Մինչդեռ Աժ ժամանակավոր հանձնաժողովը ստեղծվում է Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունք ունի միայն խմբակցությունը:

Այսինքն՝ քննիչ հանձնաժողով ստեղծելն ավելի դյուրին է, քան ժամանակավոր հանձնաժողով ձևավորելը, ինչը կարևոր է հատկապես խորհրդարանական փոքրամասնության համար, որն այս մեխանիզմով հնարավորություն ունի վերահսկողական վարույթ սկսել հանրային նշանակության որևէ հիմաստահարցի առնչությամբ:

<sup>10</sup> «Աժ կանոնակարգ» օրենք, հոդված 20

7-րդ գումարման Ազգային ժողովի 3 նստաշրջանների ընթացքում քննիչ հանձնաժողովի ստեղծման և գործարկման վերահսկողական ռեսուրսը կիրառվել է լիարժեքորեն. ձևավորվել է 5 քննիչ հանձնաժողով, որոնցից երկուսը՝ 2-րդ, իսկ երեքը՝ 3-րդ նստաշրջանում:

Առաջին քննիչ հանձնաժողովը ձևավորվել է ԱԺ խորհրդարանական մեծամասնությունը ներկայացնող 47 պատգամավորի ստորագրությամբ, լիազորությունների 6 ամիս ժամկետով: Այն ստեղծվել է 2016 թվականի ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրելու նպատակով, ձևավորվել է ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի հենքի վրա՝ հիմք ընդունելով ԱԺ կանոնակարգ- օրենքի համապատասխան իրավակարգավորումը<sup>11</sup>:

Հանձնաժողովը նախատեսել է ուսումնասիրել ռազմական գործողությունների օրերին զինված ուժերի ապահովման, թիկունքային սպառազինության, մարտական պատրաստության, մարտական հերթապահության կանոնների կատարման, զորքերի համալրման հարցերը, գնահատել հակառակորդի հարձակողական գործողությունների կանխմանն ու խափանմանն ուղղված հրամանատարական որոշումների օպերատիվության համարժեքությունը, դեպքերին տրված իրավական գնահատականների հիմնավորվածությունը և օրինականությունը:

Հանձնաժողովն իրավունք ունի պատկան մարմիններից պահանջել և ստանալ պաշտպանության ոլորտին առնչվող նորմատիվային և ոչ նորմատիվային փաստաթղթեր, հրամաններ, հրահանգներ, ծառայողական քննության նյութեր, զեկուցագրեր, տեղեկանքներ, կոլեգիայի և ռազմական խորհրդի հաշվետվություններ, զեկուցագրեր, որոնք կարող են լինել նաև գաղտնի:

Տեղեկանք: Ըստ հանձնաժողովի հաշվետվության՝ գործունեության առաջին 6 ամիսների ընթացքում ուսումնասիրվել է 2684 էջ տեղեկատվական-վերլուծական, հետախուզական, զորքերի կառավարման օպերատիվ ու այլ բնույթի գաղտնի և հույժ գաղտնի փաստաթուղթ: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա անցկացվել է 21 նիստ, քննվել է 10 զինծառայող: Քննության արդյունքում կազմվել և հնչեցվել է շուրջ 400 հարց, որոնց վերաբերյալ ստացվել են տեղեկություններ, պարզաբանումներ և կատարվել են ճշտումներ: Առաջիկա փուլում, ըստ հանձնաժողովի նախագահի, լսելու են ցանկով հաստատված շուրջ 40 պաշտոնյայի, վերջին 2 ամսում աշխատելու են վերջնական հանձնաժողովի եզրակացության վրա:

<sup>11</sup> Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի լիազորություններ կարող է իրականացնել միայն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով: ԱԺ կանոնակարգ, հոդված 20, կետ 2

Հանձնաժողովը, օգտվելով ԱԺ կանոնակարգ օրենքով <sup>12</sup> սահմանված հնարավորությունից, 3-րդ նստաշրջանի ավարտին հանդես է եկել գործունեության ժամկետը մինչև վեց ամսով երկարաձգելու նախաձեռնությամբ, որը խորհրդարանն ընդունել է միաձայն:

Երկրորդ քննիչ հանձնաժողովը նույնպես ձևավորվել է քաղաքական մեծամասնության նախաձեռնությամբ, ԱԺ որոշմամբ բաղկացած է 16 անդամից: 3-րդ նստաշրջանի ավարտին այն նույնպես հանդես է եկել լիազորությունների ժամկետը մինչև 6 ամսով երկարաձգելու միջնորդությամբ, որը խորհրդարանը բավարարել է միաձայն: Հանձնաժողովն ստեղծվել է Արարատի և Արմավիրի մարզերում ջրային կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանուհների և ջրային տնտեսության ԾԻԳ-ի գործունեությունն ու արդյունավետությունն նուստմասսիիելու նպատակով:

Այս հանձնաժողովը ևս կանոնավոր գործունեություն է ծավալել՝ քննարկման առարկա դարձնելով ոլորտին վերաբերող փաստաթղթեր, հրավիրելով և պարզաբանուհներ ստանալով Ջրային կոմիտեի նախագահի տեղակալից, Ջրային տնտեսության ԾԻԳ-ի տնօրենից, ջրօգտագործող ընկերությունների ղեկավարներից:

3-րդ նստաշրջանի ընթացքում 3 քննիչ հանձնաժողով ձևավորվել է խորհրդարանական փոքրամասնության՝ ԲՀԿ և ԼՀԿ խմբակցությունների պատգամավորների նախաձեռնությամբ: Դրանցից առաջինը ստեղծվել է հանքարդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի շրջանակներում գործադիր իշխանության մարմիններին ներկայացված եւ նրանց կողմից ընդունված ֆինանսական եւ այլ հաշվետվությունների օրինականությունը, հիմնավորվածությունը եւ արժանահավատությունը ուսումնասիրելու նպատակով: Հանձնաժողովին, բացի քննության առարկա հարցերի վերաբերյալ հաշվետվությունների, փաստաթղթերի և տեղեկատվության հավաքագրումից, վերապահվել է նաև փորձաքննություններ պատվիրելու, իրավասու պաշտոնատար անձանցից տեղեկություններ և պարզաբանուհներ ստանալու լիազորություն: Անդամների թվի հաստատման ԱԺ քվեարկությունը՝ 99 կողմ, առանց դեմ-ի ու ձեռնպահ-ի, վկայում է, որ քաղաքական մեծամասնությունը սկզբունքորեն դեմ չի եղել հիմնահարցը խորհրդարանական վերահսկողության առարկա դարձնելուն, և որոշումն ընդունվել է քաղաքական լիարժեք կոնսենսուսի պայմաններում:

Հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտությունը, ըստ էության, պայմանավորված էր Ամուլսարի հանքի շահագործման հիմնահարցի շուրջ հասարակական քննարկուհների հանգամանքով, ինչը փաստացի առիթ է դարձել նաև հանրապետության այլ խնդրահարույց մետաղական հանքավայրերի, մասնավորապես՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, Թեղուտի, Սոթքի եւ Մղարդի հանքավայրերի ներդրումային և հարկային պարտավորությունների կատարման գործընթացն ուսումնասիրության առարկա դարձնելու համար:

<sup>12</sup> Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը մինչև վեց ամիս է, որը կարող է մեկ անգամ, հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամսով: ԱԺ կանոնակարգ, հոդված 20, կետ 7

Քննիչ հանձնաժողովը բովանդակային առումով հասցրել է անդրադառնալ քննության առարկա հանդիսացող հարցերի շրջանակում նախաքննության կամ դատավարության փուլերում գտնվող գործերի մասին դատախազությունից ստացված տեղեկատվությանը, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների վերաբերյալ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությանը, որոշակիացնել ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների վերաբերյալ պատկան մարմիններին ուղղված հարցերի շրջանակը:

ԲՀԿ խմբակցության նախաձեռնությամբ և ԼՀԿ պատգամավորների աջակցությամբ նույնամբերին իրավունքի ուժով խորհրդարանում ստեղծվել է չորրորդ՝ ցամաքային ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը եւ 2016-2019թթ. ոլորտը սպասարկող, համակարգող եւ վերահսկող լիազոր մարմինների գործունեությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը: Զվտարկության 98 կողմ, 2 ձեռնպահ ձայներով ընդունված որոշմամբ հանձնաժողովների անդամների թիվ է սահմանվել 15-ը:

Քննության առարկան Երևանից այլ մարզերի բնակավայրեր ցամաքային ուղևորափոխադրումների կազմակերպման, սպասարկման, լիցենզավորման գործընթացը և 2016-2019թթ.ընթացքում ոլորտը սպասարկող, համակարգող և վերահսկող մարմինների գործունեությունն է, նպատակը՝ առկա խնդիրները վերհանելը և կարգավորմանն ուղղված առաջարկություններով հանդես գալը:

Խորհրդարանական ընդդիմության կողմից քննիչ հանձնաժողով ստեղծելու երրորդ նախաձեռնությունն իրականացվել է դեկտեմբերին՝ պայմանավորված Երևանի քաղաքապետարանում տրանսպորտային միջոցների ձեռքբերման և մի քանի տնտեսվարող սուբյեկտներին շինարարական թույլտվությունների տրամադրման գործընթացների հնարավոր փոխկապակցվածության, դրանում ամերևույթկոռուպցիոնչա րաշահումների առկայության կապակցությամբ հանրային-քաղաքական քննարկումների ծավալմամբ: ԲՀԿ և ԼՀԿ խմբակցությունների 35 պատգամավորի նախաձեռնությամբ իրավունքի ուժով, 6 ամիս գործունեության ժամկետով ստեղծված հանձնաժողովն ուսումնասիրելու է 2018թ. սեպտեմբերից Երևան համայնքին տրանսպորտային միջոցների և այլ գույքի փոխանցման, ծառայությունների մատուցման պայմանագրերի, ինչպես նաև ոչ գույքային իրավունքների, շինարարության թույլտվությունների, արտոնությունների տրամադրման իրավաչափությունն ու հնարավոր կոռուպցիոն ռիսկերը:

Քննիչ հանձնաժողովների ձևավորման պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի քանի ընդհանրացում:

- Հանձնաժողովների ձևավորման, դրանց գործունեության ժամկետների երկարաձգման պրակտիկան վկայում է վերահսկողական գործիքն ամբողջ պոտենցիալով օգտագործելու, ԱԺ վերահսկողական գործառույթին դոմինանտ դեր վերապահելու խորհրդարանական մոլուխների մասին:
- Առաջին երկու քննիչ հանձնաժողովները ստեղծվել են ԱԺ քաղաքական մեծամասնության նախաձեռնությամբ, խորհրդարանական ընդդիմության պասիվության և որոշակի դիմադրության պայմաններում, ինչը թույլ էր տալիս ենթադրել, որ ինստիտուցիոնալ այս գործիքի քաղաքական բաղադրիչն անտեսվում է խորհրդարանական ընդդիմության կողմից, իսկ քաղաքական մեծամասնությունը հակված չէ գործել կոնսենսուսի սկզբունքով: Սակայն 3-րդ նստաշրջանում 3 քննիչ հանձնաժողովի ստեղծման նախաձեռնությունն էլ եղել է ընդդիմադիր խմբակցությունների: Հաղթահարելով ներքին դիրքային մրցակցությունը՝ ԲՀԿ-ն և ԼՀԿ-ն այս հարցում ձևավորել են ԱԺ կանոնակարգ օրենքի՝ ընդդիմությանը վերապահված հնարավորությունը համատեղ ուժերով իրացնելու միասնական մոտեցում: Մյուս կողմից՝ ԱԺ-ում ձևավորված վերջին 3 հանձնաժողովների անդամների թվի հաստատման որոշումներն ընդունվել են գրեթե միաձայն՝ առանց դեմ և ձեռնպահ ձայների, ինչը փաստում է քննիչ հանձնաժողովների ձևավորման հարցում ընդդիմությանն առնվազն չխոչընդոտելու, նրան հսկողական որոշակի «արտոնություններ» տրամադրելու քաղաքական մեծամասնության մոտեցման մասին:
- Քննիչ հանձնաժողովների ձևավորման իրավանորմերի վերլուծությունը, սակայն, ցույց է տալիս, որ առկա են իրավական կազուսների առաջացման որոշակի ռիսկեր: Մասնավորապես, ԱԺ կանոնակարգ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ քննիչ հանձնաժողովը պատգամավորների ընդհանուր թվի առնվազն  $\frac{1}{4}$ -ի (պաշտպանության ոլորտին առնչվող հարցերի դեպքում՝  $\frac{1}{3}$ -ի) պահանջով ստեղծվում է իրավունքի ուժով: Մինչդեռ նույն հոդվածի 6-րդ մասը նախատեսում է, որ քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանում է Ազգային ժողովը՝ համապատասխան որոշման ընդունմամբ: Օրենքը փաստացի չի կարգավորում, թե ինչ իրավական ռեժիմ է գործում այն դեպքում, երբ ԱԺ-ն քվեարկությամբ չի ընդունում քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին որոշումը: Թեև չի սահմանափակվում քննության նույն առարկայով հանձնաժողով ստեղծելու ստորագրահավաքով կրկին հանդես գալու պատգամավորների իրավունքը, սակայն տեսականորեն կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ օգտվելով անդամների թիվը ԱԺ որոշմամբ հաստատելու պարտադիր ընթացակարգից՝ ԱԺ մեծամասնությունը շարունակաբար կասեցնի քննիչ հանձնաժողով ստեղծելու ընդդիմության նախաձեռնությունները՝ անկախ իրավունքի ուժով դրա ստեղծվելու օրենսդրական պահանջի առկայությունից:

- Զննիչ հանձնաժողովների ստեղծման արդեն որոշակիացող պրակտիկան վկայում է, որ դրանց ձևավորման նախաձեռնությունները երբեմնե հիմնվում օբյեկտիվ անհրաժեշտության, արդիականության, առավելևս ԱԺ-ի իրավասության տիրույթների, վերաբերելիության հիմնավորվածության վրա: Պատգամավորների ստորագրություններով ԱԺ նախագահին ուղղված գրությունները, որոնք բավարար են քննիչ հանձնաժողովի ստեղծման մասին հայտարարությամբ հանդես գալու համար, գրեթե բոլոր դեպքերում նույն կառուցվածքն ունեն. քննության առարկայի նկարագրությունը և հանձնաժողովի իրավասությունների շրջանակը միմյանցից բովանդակային առումով չեն տարբերվում և սահմանափակվում են, ըստ էության, հանձնաժողովի անվանման վերաշարադրմամբ:

Այս հանգամանքը իրականում եական է նրանով, որ քննիչ հանձնաժողովների լիազորությունների, ուսումնասիրությունների խորության և ուղղությունների առումով մեկնաբանելիության լայն հնարավորություններ է ստեղծում: Օրինակ՝ Երևան համայնքին տրանսպորտային միջոցների եւ այլ գույքի փոխանցման, ծառայությունների մատուցման պայմանագրերի, ինչպես նաեւ շինարարության թույլտվությունների, արտոնությունների տրամադրման իրավաչափությունը ու կոռուպցիոնռիսկերն ուսումնասիրող հանձնաժողովի սահմանած քննության առարկայի ձևակերպումը պարունակում է ենթադրյալ հանցագործության հատկանիշների մասին կասկած, ինչը ոչ այնքան քաղաքական մարմնի քննիչ հանձնաժողովի, որքան իրավապահ մարմինների գործառույթների տիրույթում է: Հատկանշական է, որ հանձնաժողով ստեղծվել է այն փուլում, երբ ՀՀ դատախազությունն արդեն դիմել էր Երևանի քաղաքապետարան այդ գործընթացին և գույքային նվիրատվություններին վերաբերող փաստաթղթերի փաթեթն ստանալու և ուսումնասիրության առարկա դարձնելու նպատակով: Եթե հանձնաժողովս ի սկզբանե սահմաներ քննության չափորոշիչներն ու սահմանները, կոնկրետացներ նպատակները, ապա հնարավոր կլիներ գնահատել, թե որքանով է այն մասցել խորհրդարանական գործառույթների սահմաններում և որքանով է երաշխավորված, որ չի մտնելու քրեաիրավական դաշտում ընթացող պրոցեսների հարթություն: Մեկ այլ՝ Արարատի եւ Արմավիրի մարզերում Ջրային կոմիտեի, դրա կառուցվածքային ստորաբաժանուների և ջրային տնտեսության ԾԻԳ-ի գործունեությունն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի պարագայում չի հիմնավորվել մյուս մարզերը ուսումնասիրության շրջանակում չներառելու, ուսումնասիրության ժամանակագրական ընդգրկումը չնշելու հանգամանքը: Որոշակիության առումով շահեկանորեն տարբերվում է առաջին՝ 2016 թվականի ապրիլին ծավալված ռազմական գործողությունների հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովը: Այս դիտարկումները փաստում են, որ քննիչ հանձնաժողովներ ձևավորման հարցում խորհրդարանը դրսևորել է որոշակի շտապողականություն՝ ավելի շատ գերխնդիր դարձնելով դրանց ստեղծումը, քան ակնկալվող արդյունքը: Ակնհայտ է, որ կա հանձնաժողովների գործունեության նպատակների, գործիքակազմի, մեթոդական ուղեկիշների հստակեցման և կարգավորումների ապահովման կարիք:

Քննիչ հանձնաժողովների ինստիտուտը կայացման ճանապարհին է, իսկ նշված ինդիկատորը պայմանավորված են ինստիտուտի ներդրման կարճ ընթացքով: Սա խորհրդարանին առաջադրում է քննիչ հանձնաժողովների ձևավորման ինդիկատորը վերլուծելու հրամայական՝ ինստիտուտն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար:

## ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՇԱՐԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՅՐԱՏԱԴՊՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդարանն իրավասու է ձևավորել ժամանակավոր հանձնաժողովներ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով: Ժամանակավոր հանձնաժողովը ձևավորվում է ԱԺ որոշման ընդունմամբ՝ առանձին օրենքների, ԱԺ որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման, դրանց վերաբերյալ ԱԺ եզրակացություններ կայացնելու համար:

7-րդ գումարման Ազգային ժողովում երեք նստաշրջանների ընթացքում որևէ ժամանակավոր հանձնաժողով չի ձևավորվել, այդ թվում՝ պատգամավորների էթիկայի և շահերի բախման հարցերի առնչությամբ:

### Էթիկայի հանձնաժողովի ինստիտուցիոնալ «չեզոքացումը»

7-րդ գումարման 3 նստաշրջանների ընթացքում ԱԺ-ն որևէ էթիկական հարցի չի անդրադարձել, որևէ վարույթ չի իրականացրել: Դա այն պարագայում, երբ մի քանի առանցքային հարցերի շուրջ խորհրդարանական քննարկումներ չափազանց բուռն ընթացք են ունեցել՝ ուղեկցվելով էթիկական նորմերի խախտումներով կամ այնպիսի դրսևորումներով, որոնք առնվազն պատգամավորի վարքականոնի խախտման հավանականության առումով քննարկման առարկա կարող էին դառնալ:

Մասնավորապես, 3 փաստաբաններ դիմել էին Ազգային ժողովի խմբակցություններին՝ պահանջելով ստեղծել ԱԺ էթիկայի ժամանակավոր հանձնաժողով՝ քննարկելու ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Զոհարյանի կողմից կայքերից մեկին տրված հարցազրույցում ԱԺ նախկին փոխնախագահ Արփինե Յովհաննիսյանի հասցեին հնչեցված արտահայտությունների՝ ԱԺ պատգամավորի էթիկայի կանոններին համապատասխանության հարցը:

Դիմումի հիմքում դրվել էր «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատգամավորական էթիկայի այն կանոնների խախտման խնդիրը, որոնց համաձայն պատգամավորը պարտավոր է հարգել հանրության բարոյական նորմերը, իր գործունեությամբ նպաստել Ազգային ժողովի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը, ամենուր և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսևորել պատգամավորին վայել վարքագիծ և հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ: Սակայն դիմումը պաշտոնական ընթացակարգով որևէ քննարկման չարժանացավ:

Էթիկայի հանձնաժողովի ձևավորման պրակտիկայի փաստացի բացակայությունը պայմանավորված է էթիկայի նորմերի պահպանման նկատմամբ հսկողության և էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովատեղծելու համար սահմանված իրավական այնպիսի համակարգով, որը գործնականում անհնար է դարձնում այս ինստիտուտի կայացումը գործող խորհրդարանում:

Էթիկայի նորմերի հնարավոր խախտման դեպքով վարույթի հարուցումը քաղաքականացված է՝ ժամանակավոր հանձնաժողովի կարգավիճակ տալու մոտեցմամբ պայմանավորված. նման հանձնաժողով կարող է ստեղծվել միայն ԱԺ խմբակցությունների նախաձեռնությամբ, ընդ որում՝ սահմանված չեն վարույթի հարուցելու կամ հարցը քննության առարկա դարձնելու իրավական չափորոշիչները:

ԱԺ խմբակցությունները, որոնց հայեցողությանն է թողնվել ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումը, կարող են ուղղակի անտեսել էթիկական նորմերի խախտման վերաբերյալ ոչ միայն քաղաքացիների կամ քաղաքական, հասարակական միավորումների, այլև պատգամավորների դիմումները: Այս կերպ փաստացի չեզոքացվել է ԱԺ պատգամավորների վարքագծի նկատմամբ հանրային հսկողության հնարավորությունը: Դրանով է բացատրվում նաև քաղաքացիների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից խմբակցություններին նման հարցերով այլևս չդիմելու ձևավորվող պրակտիկան:

Էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի ինստիտուցիոնալ չեզոքացման հիմնական պատճառներից է նաև էթիկական խախտման վերաբերյալ կազմված եզրակացությունը գործառնական նշանակությունից զրկելուն նպաստող իրավական կառուցակարգը: «ԱԺ կանոնակարգ» օրենքով հանձնաժողովի ձևավորման և գործունեության արդյունքում կազմված եզրակացությունը որևէ կարգապահական կամ այլ բնույթի պատասխանատվության միջոցի կիրառման չի հանգեցնում, անգամ ԱԺ-ում քննարկման առարկա չի դարձվում և ընդամենը տեղադրվում է ԱԺ պաշտոնական կայքում:

<sup>13</sup> «ԱԺ կանոնակարգ» օրենք, հոդված 17, մաս 5



Նման իրավիճակում պատգամավորական Էթիկայի վարքականոնները լայն իմաստով պատգամավորների վարքագծի վրա ներազդեցության ռեսուրս ունենալ չեն կարող: Նախորդ նստաշրջանի ընթացքում, պայմանավորված կոնկրետ դեպքի շուրջ քաղաքական քննարկումներով, «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցը հրապարակային հայտարարություններով որոշակի ազդակներ էր հղել առ այն, որ Էթիկայի հանձնաժողովի ինստիտուտի բովանդակային վերակառուցման և վերաիմաստավորման նպատակով անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական փոփոխություններ: Սակայն երրորդ նստաշրջանի ընթացքում այդ ուղղությամբ որևէ նախաձեռնություն խմբակցությունների կողմից չի ցուցաբերվել:

### **Կարգավիճակային անհամատեղելիության և շահերի բախման ինստիտուտների իրավական խութերը 3-րդ նստաշրջանի համատեքստում**

Պատգամավորների բարեվարքության տեսանկյունից Էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե որքանով են խորհրդարանում կարգավորված և համակարգված շահերի բախման, պաշտոնեական անհամատեղելիության և պատգամավորների համար նախատեսված սահմանափակումների հետ կապված իրավահարաբերությունները: Սահմանադրության 95-րդ հոդվածը սահմանում է, որ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Այս սահմանափակման խախտումը պատգամավորի լիազորությունների դադարեցման սահմանադրական հիմք է, որը կարող է սահմանված ընթացակարգով իրականացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Ազգային ժողովին խախտումն արձանագրող եզրակացություն ներկայացվելու պարագայում

Ներկայիս օրենսդրական կարգավորումների պայմաններում, սակայն, պատգամավորի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրողության պարզումն ու գնահատումը զգալիորեն բարդացված է: «Ձեռնարկատիրությամբ զբաղվել» հասկացությունը շահերի բախման իմաստով գործնականում նեղացվել է՝ սահմանափակելով միայն ձեռնարկությունների կառավարման անմիջականորեն կամ վստահված անձի միջոցով մասնակցելը, ձեռնարկության շահերից բխող կոնկրետ վարչարարական գործողություններ կատարելը:

**«Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածը** Սահմանադրության 95-րդ հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջի կատարման մեխանիզմ է դիտարկում պատգամավորական մանդատն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից դուրս գալը, առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից ազատվելը, առևտրային կազմակերպություններից դուրս գալը կամ դրանց կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հավատարմագրային կառավարման հանձնելը, առևտրային կազմակերպությունում ուրիշի գույքի հավատարմագրային կառավարումից հրաժարվելը, վճարովի հիմունքներով աշխատանքից (բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի) ազատվելը և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոններից ազատվելը:

Օրենսդրությամբ սահմանված չեն այն չափորոշիչները, որոնցով հնարավոր կլինի գնահատել, թե որքանով էպատգամավորն իր կարգավիճակից բխող լիազորությունների իրականացման ընթացքում առաջնորդվում անձնական, մասնավոր, բիզնես շահերով: 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով հանձնաժողովն օժտվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց (այդ թվում՝ պատգամավորների)՝ իրենց պաշտոնների հետ անհամատեղելիության հարցերով վարույթ հարուցելու և ընթացքը լուծելու իրավասությամբ:

Վարույթն իրականացնելիս հանձնաժողովն իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ կազմակերպություններից պահանջել քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն, ինչպես նաև՝ ուսումնասիրությունների ու փորձաքննությունների անցկացում: Սակայն հանձնաժողովն օժտված չէ անհրաժեշտության դեպքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ այդպիսի միջոցառումների իրականացման հանձնարարություն տալու իրավասությամբ: Այդ գործառույթը կարող է իրականացվել քրեական վարույթի շրջանակներում, եթե հանձնաժողովը պատգամավորի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության վարույթի շրջանակներում հայտնաբերում է առերևույթ հանցագործության հատկանիշներ և տվյալները փոխանցում գլխավոր դատախազությանը:

Շահերի բախումը գործող իրավանորմերի համատեքստում պայմանավորվում է ձեռնարկատիրական ընկերություններում պատգամավորի ունեցած ակտիվները հավատարմագրային կառավարման հանձնած չլինելու արձանագրված իրողությամբ: Սակայնակտիվները հավատարմագրային կառավարման հանձնելը չի կարող պատգամավորի կողմից իր պաշտոնից բխող լիազորությունները տվյալ կազմակերպության և նրա գործունեության ոլորտի համար բարենպաստ պայմաններին նպաստելուն ծառայեցնելու ռիսկը չեզոքացնող բավարար երաշխիք լինել:

Շահերի բախման ինստիտուտն առավել էֆեկտիվ կարող է գործել բարձրաստիճան պաշտոնատար անձանց (այդ թվում՝ պատգամավորների) կողմից նախքան պաշտոնի ստանձնումը և պաշտոնավարման ընթացքում գույքից և եկամուտներից բացի, նաև մասնավոր հատվածում իր և իրեն փոխկապակցված անձանց ունեցած շահերի, կապերի ինքնակամ հայտարարագրման և դրա նկատմամբ վերահսկողության մեխանիզմներով:

Աժ կանոնակարգը, **«Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքն** այս մոտեցման որոշակի բաղադրիչներ պարունակում են: Մասնավորապես՝ **«Աժ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքով սահմանվում է**, որ իր լիազորություններն իրականացնելիս պատգամավորը չպետք է առաջնորդվի իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով և չպետք է օգտագործի պատգամավորի պաշտոնի հեղինակությունն ի շահ իրեն կամ այլ անձի: Նույն օրենքում նկարագրված են այն իրավիճակները, որտեղ կարող են դիտարկվել շահերի բախման դրսևորումներ, սահմանված են պատգամավորների պարտավորությունները նման դեպքերում (հայտարարությամբ հանդես գալը): Օրենքը ենթադրում է նաև կոնկրետ հարցի քվեարկությանը շահերի բախման խնդիր ունեցող պատգամավորի մասնակցության բացառում:

Չնայած այս կարևորսահմանումներին՝ շահերի բախման մասին հայտարարության հնչեցումը «Աժ կանոնակարգ» օրենքով ոչ թե պարտադիր, այլ հայեցողական նորմ է: Ըստ կանոնակարգի<sup>14</sup> պատգամավորը շահերի բախման վերաբերյալ հայտարարությունը նիստի վարման կարգի շրջանակներում կարող է անել մեկ անգամ՝ քվեարկությունից անմիջապես առաջ: Այսինքն՝ վերոնշյալ իրավանորմերիմիջև առկա է հակասություն, և, մեծ հաշվով, նման հայտարարություն չհնչեցնելը որևէ հետևանք չի ենթադրում:

Աժ 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանում, ի տարբերություն 2-րդի, ոչ միայն պատգամավորների անհամատեղելիության պահանջների խախտման, այլև իրավիճակային շահերի բախման ակնառու դրսևորումներ չեն եղել: Դա առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ խորհրդարանն իր հիմնական մասով հստակ տարանջատված է բիզնեսից, նաև քիչ են եղել գործարար հատվածը ներկայացնող պատգամավորների հետաքրքրությունների ոլորտին առնչվող հարցերը: Այսուհանդերձ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորված լինելու հանգամանքը լուրջ նախադրյալներ է ստեղծում պատգամավորի կողմից անհամատեղելիության պահանջների կատարմանն առավել մեծ պատասխանատվությամբ մոտենալու համար:

<sup>14</sup> «Աժ կանոնակարգ» օրենք, հոդված 59, մաս 1, կետ 2

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ. ՊՐԱԿՏԻԿԱ և ՄԻՏՈՒՄՆԵՐ

Ազգային ժողովում որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցությունն ու ազդեցությունն ապահովող հիմնական միջոցը խորհրդարանական լսումներն են:

«Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի<sup>15</sup> համաձայն՝ խորհրդարանական լսումներ կարող են հրավիրել Ազգային ժողովի նախագահը, մշտական հանձնաժողովները (ժամանակավոր հանձնաժողովները՝ իրենց վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով օրենքի նախագծի առնչությամբ) և խմբակցությունները՝ իրենց հեղինակած նախագծին վերաբերող հարցով: Սահմանվում է, որ յուրաքանչյուր հերթական նստաշրջանի ընթացքում խմբակցությունը կարող է հրավիրել մեկ լսում: Այս սահմանափակումը լսումներ հրավիրելու իրավունք ունեցող մյուս սուբյեկտներին՝ ԱԺ նախագահին և հանձնաժողովներին չի վերաբերում, ինչը թերևս պայմանավորված է ինստիտուտը քաղաքական նկատառումներով շահագործելու հնարավորությունը սահմանափակելու նպատակով:

Սահմանվում է նաև, որ լսումների անցկացման օրը չպետք է համընկնի Ազգային ժողովի լիազումար նիստերի հետ, իսկ դրանց արդյունքում կազմված արձանագրությունը պետք է հաստատվի լսումները հրավիրած մարմնի որոշմամբ և տեղադրվի Ազգային ժողովի կայքում:

Խորհրդարանական լսումներ հրավիրելու՝ ԱԺ կանոնակարգ-օրենքով սահմանված իրավունքից ԱԺ 7-րդ գումարման 3-րդ նստաշրջանում ամենից շատ օգտվել է ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը: ԱԺ 3 խմբակցությունները խորհրդարանական լսումներ չեն հրավիրել, իսկ 11 մշտական հանձնաժողովներից միայն 3-ն են հանդես եկել խորհրդարանական լսումներ հրավիրելու նախաձեռնությամբ: Աշնանային նստաշրջանի 4 ամիսների ընթացքում Ազգային ժողովում հրավիրվել են 5, իսկ անցած 2019 թվականի ընթացքում 9 խորհրդարանական լսումներ:

Աժ նախագահ Արարատ Միրզոյանը 3-րդ նստաշրջանում հանդես է եկել խորհրդարանական լսումներ հրավիրելու 2 նախաձեռնությամբ: Դրանցից մեկը վերաբերել է «Կուսակցությունների մասին» օրենքի փոփոխություններին, մյուսը՝ պետության կողմից «Հյուսիսային պողոտա-Կասկադ» ծրագրով բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի ոտնահարման խնդիրներին:

3-րդ նստաշրջանի ընթացքում Աժ մշտական հանձնաժողովներից 1-ական խորհրդարանական լսում հրավիրել են գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի, պաշտպանության և անվտանգության հարցերի, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովները: Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը լսումներ է կազմակերպել «Կրթության ոլորտի բարեփոխումներն ու առաջիկա ռազմավարական մարտահրավերները» թեմայով, որի ընթացքում քննարկվել են «Հանրակրթության մասին» օրենքում նախատեսվող փոփոխությունները:

Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպել է խորհրդարանական լսումներ՝ «Դիմակայուն Հայաստան» թեմայով: Քննարկվել են աղետների եւ ռիսկերի քարտեզագրման, դիմակայունության մշակույթի ձեւավորման, ներդրումների նպատակային օգտագործման, իրազեկվածության, միջազգային փորձի ներդրման, տեխնիկապես հագեցվածության խնդիրները:

Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը խորհրդարանական լսումներ է հրավիրել «Վարկային քաղաքականությունը Հայաստանում» թեմայով:

Եվրոպականինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը Աժ աշխատանքային նստաշրջանի ընթացքում անցկացրել է ընդամենը 1 նիստ: Միակնիստը եղել է արտահերթ, որի ընթացքում որոշել են մինչևտարեվերջ կազմակերպել խորհրդարանական լսումներ՝ նվիրված ՀՀ-ԵՄ ընթացիկ հարաբերություններին: Լսումները, սակայն, չեն կազմակերպվել:

7-րդ գումարման խորհրդարանի 3-րդ նստաշրջանի ընթացքում լսումների հրավիրման պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել ինստիտուտի կայացման մի քանի ուշագրավ միտումներ և առանձնահատկություններ:

- Ազգային ժողովի խմբակցությունները նստաշրջանի ընթացքում որևէ լսում չեն կազմակերպել: Նույն պատկերն է եղել նաև նախորդ նստաշրջանում, ինչն ամրապնդում է տեսակետը, որ քաղաքական ուժերը լսումները չեն դիտարկում որպես օրինաստեղծ քաղաքականության առաջնահերթությունները գեներացնելու հնարավորություն:
- Պասիվացման որոշ միտումներ են նկատվել խորհրդարանական մշտական հանձնաժողովների գործունեության մեջ: 2-րդ նստաշրջանում լսումներ են հրավիրել 4, 3-րդում՝ 3 մշտական հանձնաժողով: Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը միակն է, որ լսումներ է հրավիրել երկու նստաշրջաններում:

7-րդ գումարման 2-րդ և 3-րդ նստաշրջանների ընթացքում լսումներ չի հրավիրել ԱԺ 5 մշտական հանձնաժողով. արտաքին հարաբերությունների, եվրոպական ինտեգրման, պետաիրավական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության, առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովները:

- Չնայած լսումների քանակի նվազմանը՝ որոշակիորեն մեծացել է դրանց հանրային ազդեցությունը. լսումներից մի քանիսը հանգեցրել են հասարակական որոշակի ռեզոնանսների, քաղաքական պրոցեսների գեներացման, ինչը նախկինում գրեթե չի դրսևորվել: Մասնավորապես, նստաշրջանի ընթացքում ԱԺ նախագահի նախաձեռնությամբ անցկացված՝ «Կուսակցությունների մասին» օրենքի փոփոխությունների վերաբերյալ լսումները խթանել են այդ փոփոխությունների հանրային-քաղաքական դեբատները: Իսկ պետության կողմից «Հյուսիսային պողոտա-Կասկադ» ծրագրով բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի ոտնահարման խնդիրներին առնչվող լսումները հնարավորություն են տվել վերագնահատել քաղաքացիների սեփականության իրավունքի պաշտպանության գործընթացը, հավաքագրել հնարավոր ապօրինությունների մասին փաստական բազա, ինչը կարող է այդ իրավունքների վերականգնման կամ առնվազն պատշաճ փոփոխատուցման գործընթաց ապահովել:

Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպած՝ «Կրթության ոլորտի բարեփոխումներն ու առաջիկա ռազմավարական մարտահրավերները» թեմայով ԱԺ լսումներին, որի ընթացքում քննարկվել են «Հանրակրթության մասին» օրենքում նախատեսվող փոփոխությունները, հաջորդել են ոչ մասնագիտական ֆակուլտետներում հայագիտական առարկաները ոչ պարտադիր դարձնելու

կառավարության մտադրության դեմ ուսանողների բողոքի ակցիաները, որոնք ուղեկցվել են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Չարությունյանի հրաժարականի պահանջով: Աժ լսումները կառավարության համար եղան իր մոտեցումները բարձրաձայնելու հարթակ՝ միաժամանակ ստեղծելով հիմնախնդրի խորքային ընկալման, հասարակական, մասնագիտական բաց ու հրապարակային քննարկումների հնարավորություն, որի արդյունքում օրենսդրական փոփոխությունները որոշակիորեն վերանայվեցին:

- Խորհրդարանում կայուն պրակտիկայի է վերածվում մշտական հանձնաժողովների կամ խմբակցությունների կողմից ոլորտային հիմնահարցերի քննարկման նպատակով պետական համապատասխան մարմինների ղեկավարների կամ պատասխանատուների, շահագրգիռ այլ օղակների մասնակցությամբ օրենսդրորեն չկարգավորված հանդիպումների կազմակերպումը: Նպատակային և բովանդակային առումով դրանք լիովին համապատասխանում են լսումների տրամաբանությանը: Նման հանդիպում-քննարկումներ հրավիրել է մշտական հանձնաժողովների գերակշիռ մեծամասնությունը:

Օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովում տեղի է ունեցել քննարկում իրավապահ մարմինների ներկայացուցիչների և խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողների մասնակցությամբ: Քննարկվել են զինված ուժերում ոչ մարտական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողների մահվան դեպքերով իրականացվող քննությունների հարցերը:

Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպել է աշխատանքային քննարկում՝ «Հայաստանի Հանրապետությունում չարորակ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվող ծրագրերի ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրների լուծման ուղիները» թեմայով:

Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպել է աշխատանքային քննարկում՝ «ՀՀ պետական գնումների համակարգի զարգացման ուղիները» թեմայով:

Նմանատիպ քննարկումները հանձնաժողովներն անցկացրել են խորհրդարանական վերահսկողության գործառույթի շրջանակում: Դրանք հաճախ եղել են առավել նախընտրելի, քան խորհրդարանական լսումները, որոնց կազմակերպման համար անհրաժեշտ են Աժ կանոնակարգով սահմանված որոշակի ընթացակարգեր: Սակարող է հանգեցնել լսումների նկատմամբ պահանջարկի նվազմանը և խոչընդոտել ինստիտուտի կայացմանը:

«Աժ կանոնակարգ» օրենքով<sup>16</sup> նախատեսվում է, որ լսումների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, հաստատվում լսումները հրավիրած սուբյեկտի որոշմամբ և տեղադրվում Ազգային ժողովի պաշտոնական կայքում: Իսկ Աժ աշխատակարգի 90-րդ մասով սահմանվում է, որ Ազգային ժողովի նախագահը, հանձնաժողովը կամ խմբակցությունը կարող են նախապատրաստել իրենց հրավիրած լսումների թեմայի վերաբերյալ գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ, ինչպես նաև լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր, որոնք կարող են հրապարակվել հանձնաժողովի կամ խմբակցության առաջարկությամբ՝ Ազգային ժողովի նախագահի համաձայնությամբ:

Առաջին հրավանորմի իսնդիրը լսումների անցկացման և ընթացքի արձանագրումն է: Երկրորդի նպատակը լսումների արդյունավետության բարձրացումն է, քննարկված հարցերի շուրջ ամփոփված տեղեկատվության հանրայնացումը: Այս հրավանորմը, ի տարբերություն առաջինի, ունի հայեցողական բնույթ, մինչդեռ այն կարևոր է հանրային քաղաքական օրակարգի, ոլորտում վարվող քաղաքականության կամ դրա փոփոխության վրա լսումների ազդեցությունը գնահատելու համար: Առանց վերջինի՝ լսումների ինստիտուտը ինքնանպատակ է և ձևական է դարձնում օրինաստեղծ գործընթացի վրա հանրության ազդեցության սկզբունքը:

Լսումներ անցկացրած որևէ հանձնաժողով գրավոր ելույթներ, առաջարկներ, եզրակացություններ, տեղեկանքներ և լսումների արդյունքներն ամփոփող այլ նյութեր չի հրապարակել, ավելին՝ չի հրապարակել նաև արձանագրությունները, որոնց հրապարակումը պարտադիր է: Գործնականում հրապարակվել են միայն լսումների մասին ծանուցումները:

7-րդ գումարման Աժ 3-րդ նստաշրջանի ընթացքում լսումների ինստիտուտի կիրառման հակասական միտումները հիմնավորում են այս գործիքը համապատասխան իրավական մեխանիզմներով լրացնելու և իշխանություն-հասարակություն հաղորդակցության ժամանակակից միտումներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը:





